



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10337

Ս Ս Բ Գ Ի Ս

ՅԵՐՐՈՐԴ ՎՃՌԱԿԱՆԻ
ՀԱՅԱՄԹԵՐՈՒՄՆԵՐԸ

38

U-25

Գ Ե Տ Հ Ր Ը Տ
ՅԵՐԵՎԱՆ 1931

06 APR 2010

38
U-25

Ս Ա Ր Գ Ի Ս

**ՅԵՐՐՈՐԴ ՎՃՌԱԿԱՆԻ
ՀԱՑԱՄԹԵՐՈՒՄՆԵՐԸ**

Թարգմ. կրեատումներով Ա. ՄԵԼԻՔՆՅԱՆ

ՊԵՏՆՐԱՏ

1981

ՅԵՐԵՎԱՆ

54.929

26 JUL 2013

Պետերատի Տպարան
Գլավիխտ 6886 ք)
Հրատ. № 1818
Պատվեր 5565
Տիրաժ 1500



1. ՀԱՏԻ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐ—ՊԱՅՔԱՐ ՍՈՑԻԱԼԻՉՄԻ ՀԱՄԱՐ

«Թվում է, թե սա պայքար է մեայն հացի համար. իսկապես սա պայքար է սոցիալիզմի համար»:

Լ Ե Ա Ի Ո

Տնտեսավարների խորհրդակցութիւնը (23 հունիսի 1931 թ.) ընկ. Ստալինը յուր ճառի մեջ ասել է.

«Մենք հաղթահարեցինք հացի դժվարութիւնները և վոչ միայն հաղթահարեցինք, այլ և արտահանում ենք աշխարհի քանակութեամբ հաց, վորպիսին դեռ չենք արտահանել խորհրդային իշխանութեան դոյութեան ժամանակամիջոցում»:

«Մենք հիմնովին քայքայեցինք շերտավորումը դյուղում, հետևապես և հաղթահարեցինք այն մասսայական աղքատութիւնը, վորը դյուղացուն դյուղից քաղաք էր քշում: Վերջապես մենք դյուղին մատակարարեցինք տանյակ հազարավոր տրակտորներ և դյուղատնտեսական մեքենաներ, ջախջախեցինք կուլակին, կազմակերպեցինք կոլտնտեսութիւններ և հնարավորութիւն տվինք դյուղացուն մարդավայել ապրելու, աշխատելու»:

Այս խոսքերի մեջ ամփոփվում է դյուղում կուսակցութեան վարած քաղաքականութեան, դյուղի սոցիալիստական վերակառուցման համար մղվող պայքարի, հացահատիկի պրոբլեմի բայլչեիկյան լուծման արդիւնքը:

Հոկտեմբերյան հեղափոխութեան հենց սկզբից կուսակցութեանը և խորհրդային իշխանութեանը համառոտ են ու վճառահանորեն աշխատում ելին հատկիկ պրոբլեմը լուծելու համար: Հացի համար պայքարը կարմիր թելի պես անցնում է սոցիալիստական շինարարութեան զարգացման բոլոր ետապներին: Այդ պայքարը տարվել է մեր հեղափոխութեան պատմութեան տարբեր շրջաններում տարբեր մեթոդներով, սակայն միշտ էլ այդ պայքարը յեղել է պայքար պրոլետարիատի դիկտատուրան ամրապնդելու, սոցիալիզմի համար:

«Հսկայական յերկրում բնակչութեանը հացով ապահովելու խնդրի լուծումը, — ասում էր Վլադիմիր Լենինը 1919 թ., — հաղորդակցութեան վատ միջնոցներով, միմյանցից անջատ ապրող գյուղացիութեամբ, անասելի դժվար էր, և այդ խնդիրը բոլորից շատ չարչարանք (X П О Ч О Т) էր հասցնում մեզ: Կոմիսարների խորհրդի բոլոր նիստերը վերահիշելով, կասեմ — վոչ մի խնդրի վերա խորհրդային իշխանութեանն այնպես համառոտ են չեր աշխատում, ինչպես այս խնդրի վերա»:

Հացի համար պայքարի Ֆրոնտում յուրաքանչյուր հաջողութեան կուսակցութեան կողմից միշտ էլ նշվել է վորպես մեր յերկրում պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդման դործի խոշորագույն հաջողութեան: Դեռ Կոմիսարների յերրորդ կոնգրեսում Լենինը, կանգ առնելով խորհրդային իշխանութեան պարենավորման քաղաքականութեան հաջողութեանների վերա, ասել է.

«Մեր լրիվ իշխանութեան առաջին տարում, (1918 թ. դեպտոսի 1-ից մինչև 1919 թ. դեպտոսի 1.) հավաքված է յեղել 110 միլ. փութ հաց, յերկրորդ տա-

րում՝ 220 միլ. փութ, յերրորդում՝ 285 միլ. փութից ալիլի: Այժմ, արդեն գործնական փորձ ունենալով, մենք խնդիր ենք դնում հավաքել և վորոշակի մտածում ենք հավաքելու 400 միլ. փութ: Պարեկտյրն ֆոնդի բավական քանակութեանը փաստացի տեր յինելով միայն, քանվորական իշխանութեանը ի վիճակի յե տնտեսականի նկատմամբ ամուր կանգնելու յուր սեփական վոտների վրա, թեև դանդաղ, սակայն ապահովի խոշոր արդյունաբերութեան անշեղ վերականգնումը, նիշտ կազմակերպել ֆինանսական սխտեմը»:

Գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցումը և խորհանտեսութեանների, կոլտնտեսութեանների ու ՄՏԿ ուժեղ զարգացման հիմունքով նրա վերելքը կուսակցութեան կողմից իրադրվում է յին կապիտալիստական տարրերի մեր յերկրի վերջին լուրջ կապիտալիստական դասակարգի — կուլակութեան, հակահեղափոխական տրոցկիզմի, աջ սպորտուենիզմի դեմ վարած կատաղի պայքարի ընթացքում:

Հացի դժվարութեանների ժամանակաշրջանում (1927-28 թ.) աջ սպորտուենիստները — այդ «դյուղացիական մենատնտեսութեանների յերգիչները» — հացի դժվարութեաններից դուրս դալու յեղքը փնտռում է յին չուկան «նորմալ» դարձնելու, դների ազատ խաղի թուլլատվութեան և դյուղացիական մենատնտեսութեանների անսահմանափակ զարգացման մեջ, սրանց թվում դասելով նաև կուլակային տնտեսութեաններին: Չհամաձայնվելով կոլտնտեսութեանների և խորհանտեսութեանների զարգացման արագ թափի հետ, նրանք հաստատուները դործի ինքնահոսի թերիան է յին քարորդում ու պահանջում արտասահմանից հաց ներմու-

ծել: Կուսակցութիւնն աջերի կուլակային այդ ծր-
րադրին հակառակ արնդում եր, վոր՝

«Յեւքը (հացի դժվարութիւնները) նախ և առաջ
նրանումն է, վոր այդ մանր, հետամնաց ու փոշիացած
գյուղացիական անտեսութիւններէց անցնել միացյալ,
խոշոր, հանրաշնացված, գիտութեան տվյալներով դիմ-
ված, մեքենաներով ապահովված և մեղ համար մեծ
քանակութեամբ ապրանքային հաց արտադրելու ըն-
դունակ անտեսութիւնների: Յեւքը— գյուղացիական
մեծատնտեսութիւնից կոլեկտիվ հասարակական տըն-
տեսութեան հողագործութեան ասպարիզում անցնելու
մեջ է»*) :

Բավական յեղով 2 տարվա սոցիալիստական շինա-
րարութիւնը կուսակցութեան գլխավոր գծի հիմուն-
քով, վորպէսզի մեր յերկրում սոցիալիզմի կառուց-
ման անկարելիութեան՝ տրոցկիստները «թերթիայի»
մենչեիկյան ելութեան մերկացումից հետո, կոր ի գլուխ
ջախջախել նույնպէս և աջերի կուլակային «թերթիա-
ները»՝ «կուլակի խաղաղ ճանապարհով սոցիալիզմ նե-
րածելու» և գյուղատնտեսութեան իբր թե տեղի ունե-
ցող հետադիմութեան վերաբերյալ:

Դեռ վոչ աչնքան հեռու անցյալում իր ճառերից մե-
կում ընկ. Ռիկովն ասում եր.

«Ամենապատասխանատու ընկերներից մեկը, վո-
րը հաճախ մամուլում յելույթ է ունենում, մոտ ժա-
մանակներս ասում եր այսպէս. «Մեղ մոտ արտադրա-
կան ուժերի զարգացումը կատարվում է գյուղատնտե-
սութեան կոլեկտիվացման ձևերի միջոցով, և այլ ձե-
վերով զարգանալ չի կարող». այդ ընկերով կողմից

*) Մտալին, — «Հացի ֆրոնտում»
6

զարգացրած հայեցակետի հիմքում կա արմատապես
սխալ նախադրյալ, վոր մեծատնտեսութիւններն իբր
թե չեն կարող մեր զարգացման տվյալ ժամանակա-
շրջանում առաջ ընթանալ:

Յենքալրեմք մի բապե, վոր 100 միլիոն գյուղացի
կալատացիին այդ բնկերոջ, կարց է ծագում, այդ ժա-
մանակ ինչո՞ւ նրանք պիտի պաշտպանեն խորհրդային
իշխանութեանը:

«Յեվ այդ աչն ժամանակ, յերբ գյուղատնտեսու-
թիւնը դեռ յերկար տարիների ընթացքում կախում
կունենա գլխավորապէս մեծատնտեսութիւններից: Իմ
ձեռքի տակ չկա ստուգված թիվ, բայց յես չեմ սխալ-
վի, յեթե ասեմ, վոր կոլտնտեսութիւնների և խորհ-
տնտեսութիւնների դերը հացի արտադրութեան մեջ
բնորոշվում է դեռ 2-3 %-ով:

Սորացնել գյուղացիութեան գիտակցութեան մեջ
աչն համոզմունքը, «վոր նրանք չեն կարող լավացնել
հողի սգտագործումը մեծատնտեսութիւններում և
չատ բերք հալաքել, քան թե հիմա, — դա նշանակում է
յերկիրը հրել է դեպի նոր ու նոր ոգնաժամեր»*) :

Այսպէս գրուում է յին աջ ոպորտունիստները կու-
սակցութեան XXV համագումարի լողունդին, վորը
կոչ եր անում չքավոր-միջակային մասսաներին՝

«Առաջ դեպի խոշոր կոլեկտիվ անտեսութիւն»:
Կարո՞ղ է այժմս վորեւե մեկը կասկածել նրանում,
վոր աջ ոպորտունիստները սղաշապանում է յին գյուղա-
տնտեսութեան զարգացման կուլակային-կապիտալիս-
տական թերթիան:

2-3 տարի առաջ կուսակցութիւնն ընդգծեց կոլ-

*) «Իդէոսիա».— № 163. 15 հուլիսի 1928 թ.

անտեսութեան և խորհանտեսութեան շինարարութեան ուղիով ծախալսող հացահատիկային պրոբլեմի լուծման կոնկրետ ծրագիրը: Այդ ծրագրի հիմքում դրված և բայլչեիկյան միտք, նրա մասին, վոր գյուղատնտեսութեան վերակառուցման քանալին հանդիսանում է մեր ինդուստրիայի գարգացման արագ տեմպը:

Համ կ(բ) կ մեջ գոյութիւն ունեցող աջ թեքման մասին իր ճառում (ապրիլ 1929 թ.) ընկ. Ստալինը, խոսելով հատիկային պրոբլեմի լուծման «կուսակցութեան պլանի» մասին, ասել է.

«Մենք վերաշինում ենք (վերակառուցում) արդիւնաբերութիւնը: Մենք լուրջ կերպով սկսում ենք վերաշինել գյուղատնտեսութիւնը (վերակառուցում): Դրա համար պիտի լայնացնել կոլտնտեսութիւնների և խորհանտեսութիւնների շինարարութիւնը, կոնսորակտացիայի և մեքենա-տրակտորային կայանների մասսայական դործադրումը, վորպես արդիւնաբերութեան և գյուղատնտեսութեան միջեւ արտադրական գողման միջոց»*):

Այս ծրագրի նշման ժամանակամիջոցում «կոլտնտեսութիւնների և խորհանտեսութիւնների դերը հացի արտադրութեան խնդրում ընորոշվում է 2-3% -ով»:

«Հաշվի առնելով» կոլտնտեսութիւնների և խորհանտեսութիւնների այս չնչին դերն, աջ ոպորտունիստները կոչ եյին անում կուսակցութեանը չհամոզել գյուղացոց, վոր նրանք կոլտնտեսութեան շուրջը համախմբելով, կարող են հողի մշակութիւնը լայնացնել: Թե վորքանով եր աջ ոպորտունիստների այդ հաշիվը

վոր մարքսիստական և վոր լենինյան, այլ կուլակային, դրանում կարելի չէ համոզվել հետեւյալ թվերից:

Առ 1 հոկտեմբերի 1928 թ. կոլտնտեսութիւններում ընդգրկված էյին գյուղացիական տնտեսութիւնները 2,3 %:

Առ 1 հոկտեմբերի 1929 թ. — 7,6 %

Առ 1 հոկտեմբերի 1930 թ. — 22,1 %

Առ 20 հուլիսի 1931 թ. 57,1 % գյուղացիական տնտեսութիւնների:

Հացահատիկային խոշորագոյն շրջաններում (Ուկրայնայի տափաստան, Հյուսիսային Կովկաս, Ներքին Վոլյան, Միջին Վոլյան, Անդրվոլյան) համատարած կոլեկտիվացումն արդեն ավարտված է. հատիկային մյուս շրջաններում չքաօր ու միջակ տնտեսութիւնների մեծ մասն ընդգրկվել է կոլտնտեսութիւնների մեջ:

«1931 թ. ցանքսը միացյալ կոլեկտիվ տնտեսութեան բարձր արտադրութեան նոր ձեւեր տվեց: ԽՍՀ Մ-ում մայիսի մեկ հնգորյակում ցանքը (9-10 միլ. դա) բավականաչափ դերազանցեց անցյալ տարվա մայիսի մեկ հնգորյակի ցանքսից (6 միլ. դա): Մեքենատրակտորային կայանները մշակեցին կոլտնտեսութիւնների գարնան ցանքսի մեկ յերրորդից ավելին: 20 միլ. դա ավելի: Կոլտնտեսութիւնների մեկ ձիուն հասանելիք ցանքսը համարյա թե յերեք անգամ դերազանցեց մենատնտեսատիրոջ մեկ ձիու հասանելիք ցանքսից. կոլեկտիվի յուրաքանչյուր մեկ տնտեսութեան ցանքսը 2-3 անգամ դերազանցեց մենատնտեսատիրոջ ցանքսից: Կոլտնտեսութիւններում հողի մշակման վորակը բարձրացավ»:

* «Լենինի գմէ հարցեր» հրատ. 2, յեր. 505:

«Պորհանտեսություններում ցանքսի տարածու-
թյունը, 1930 թ. համեմատութեամբ, աճել է յերկու
անգամից ավելի: Հատիկային տրեստը, անասնաբու-
ժական տրեստները, և տեխնիկական կոլտուրաների
խորհանտեսությունները 1931 թ. դարնանը ցանկելով 8
միլ. դա-լց ավելի, անցյալ 1930 թ. դարնան 3,2 միլ.
փոխարեն, գերակատարեցին խորհուրդների VI-րդ
համագումարի առաջադրանքը: Երջաններից շատերում
խորհանտեսությունները ցանքը 2-3 շաբաթով կոլտըն-
տեսություններից շուտ են ավարտել: Պորհանտեսու-
թյունների զարգացման և աշխատավոր դյուրացիու-
թյան մեծամասնությունը կոլեկտիվացման ուղին անց-
նելու հետևյալնքով, մեր յերկիրը դարձավ ամենախո-
շոր գյուղատնտեսական յերկիրն աշխարհում: 1931 թ.
դարնանը, 200 հազար կոլեկտիվ տնտեսություններ,
(փարոնք ընդգրկել են 13 միլ. նախկին մենատնտեսու-
թյուններ) ցանեցին 4 հազար խորհանտեսությունների
հետ միասին դարնան ցանքի տարածության յերկու
յերրորդից ավելին, այն ժամանակ, յերբ 12 միլ. մե-
նատնտեսություններն հնարավորություն ունեցան ցա-
նելու դարնան ցանքսի տարածության միայն մեկ յեր-
րորդը»*):

Անհրաժեշտ է նկատի ունենալ, վոր կոլտնտեսու-
թյունների կողմից ցանվելիք հողի տարածությունն
1927 թ. կազմում էր 0,8 միլ. դա, 1930 թ.— մոտա-
վորապես 36 միլ. դա., հաշվելով աշնանացան և գար-
նանացան հողակտորները. իսկ ընթացիկ տարում հա-
մայնացված սեկտորը ցանել է համարյա թե 2 անգամ
ավելի կալվածատերերի և կուլակների նախապատե-

*) Համ 4(բ) ԿԿԿ-ի 1931 թ. հունիսի պլենումի բանաձևից:

րագվյան ժամանակվա և 7 անգամ ավելի 1927 թ. կու-
լակային ցանքի մակարդակից:

Շատ արգարացի յեր ընկ. Ստալինը, յերբ XVI
կուսհամագումարում ասում էր.

«Հարկավոր է ընդունել, վոր մեր արդյունաբերու-
թյան վոչ մի ճյուղը, վոր զարգանում է ընդհանրապես
բավականին արագ տեմպերով, չի տվել մինչև այժմ
այնպիսի շտենոված տեմպեր, ինչպիսին կոլտնտեսու-
թյան շինարարությունը»:

Այլ ոպրտունիստներն աշխատում էյին կուսակցու-
թյան վզին փաթաթել հնդամյակի փոխարեն— յեր-
կամյակը: Նրանք հնդամյակին հակադրում էյին յեր-
կամյակը, նրա համար, վորպեսզի հնդամյակի ինդուս-
տրացման և կոլեկտիվացման բարձր տեմպերի դիրքա-
վորումը տապալեն:

«Կուսակցության դեկավարությամբ և նրա գլխա-
վար Գժի հիմունքով բանվոր դասակարգը և չփափարա-
միջակային տնտեսություններն իրագործեցին կոլտըն-
տեսության հեգամյակը 2 տարում, իսկ յտրիտնտեսու-
թյանը— պակաս քան 3 տարի:

2. ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿՈԼՏԸՆ- ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՄՏԿ-ՆԵՐԸ ԼՈՒԾԵՑԻՆ ՀԱՏԻԿԱՅԻՆ ՊՐՈՒԼԵՄԸ

Կոլեկտիվացման վճռական հաղթանակները, խորհ-
տնտեսությունների և Մ. Տ. Կ.-ների աճումը, դյուրա-
տնտեսության սոցիալիստական սեկտորի ապրանքային
արտադրության բարձր տոկոսը ստեղծել են բոլոր հը-
նարավորություններ հացամթերման պլաններն արագ
իրագործելու և միաժամանակ՝ հացը կայարանամերձ

կետերը և ելեկատորները մոտ տեղափոխելու: Հատիկային պլանը մենք լուծեցինք հիմնականում դեռ անցյալ դյուղատնտեսական կամպանիայի ժամանակ, այժմ մենք լուծում ենք ազգային վերջնականապես: Հայանի յե, վոր հատիկային տնտեսութան հարցը վերջնական լուծման պրոբլեման հանդիսանում և դյուղատնտեսութան սխտեմում հիմնական ողակը և վերջինի բոլոր տեսակի պրոբլեմների լուծման բունային: Արդեն 1934 թ. մենք տեխնիկական կուլտուրաների ցանքսի մաքրիմալ չափի տարածման և ամառնորածակամ խորհանտեսութունների և կուլտեսութունների ու կաթնա-ապրանքային ֆերմաների շինարարութան գործում խոշոր հաջողութուններ ձևոք բերեցինք: Արդեն հիմա հացը, ճակնդեղը և արեվածադեղը դարձել են կարևորագույն կուլտուրաները:

Սորհանտեսութունների և կուլտեսութունների շինարարութան հիմունքով հնգամյակի յերրորդ տարին ավեց բաւքակի ցանքի տարածութան լայնացում 50,5 %, համեմատելով անցյալ տարվա հետ. նակընդեղը—30,7 տոկ., արեվածադեղը 32,5 տոկ. վուշինը—35 տ.: Ինչո՞ւմ են պայմանները և վո՞րն և հատիկային պրոբլեմի վերջնական լուծման ուղին:

«... Լուծել հատիկային պրոբլեմը, — ասում էր ընկ. Ստալինը XVI-րդ համազուգարում յուր գեկուցման մեջ, — և դուրս բերել դրանով դյուղատնտեսութունն ամենալուրջ վերելքի ուղիի վրա, սա նշանակում և հիմնականում լուծարքի յենթարկել դյուղատնտեսութան հետամնացութունը, զինել նրան (դյուղատնտեսութան) տրակտորներով, դյուղատնտեսական մեքենաներով, մատակարարել նրան զիտական աշխատակիցները և ելեկատորները, բարձրացնել աշխատանքի արտադրողականութունը, ավելացնել ապրանքայնութունը: Առանց այս պայմանների ավելորդ և յերագել հատիկային պրոբլեմի լուծման մասին: Հնարավոր է իրականացնել այս բոլոր պայմանները դյուղատնտեսական մանր մենատնտեսային բաղայի վերա: Վուշ, չի կարելի... Այստեղից խորհանտեսութուններ ստեղծելու և դյուղացիական մանր մենատնտեսութունների վերածումը խոշոր կուլտուրի տնտեսութունները — միակ նախապահն է դյուղատնտեսութան պրոբլեմի լուծման ընդհանրապես, հատիկային պրոբլեմինը մասնավորապես»^{*}): Հատիկ արտադրող շրջանները՝

2 քալոք—վիջակային տնտեսութունները կամ համատարած կուլտուրի պայման են յենթարկվել և այդ հիմունքով կուլտուրային վերացնել վերպես դասակարգել, կամ ել մոտ են համատարածի ավարտմանը: Հատիկային խորհանտեսութունները լիովին կատարել են իրենց հնգամյա պլանը: Մեքենա-տրակտորային կայանները, ինչհարցային իշխանութան ղեկավարութամբ, արագորեն կուլտուրատեսութունները վեր են ածում ավելի խոշոր մեքենայացված կուլտուրի տնտեսութունների: Կուլտեսութունների և խորհանտեսութունների մեքենայացման մակարդակը բավականին բարձրացել է:

3. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԵԿՏՈՐԻՆ

Քաղաքացիական կուլմների ծանր և սոցիալիստական շինարարութան առաջին խաղաղ տարիներում,

լենինը հաճախ դիմելով չքավորա-միջակային մասսա-ներին, ասել է .

«Յերբ գյուղացին մեզ հացով վարկ տալու լինի, մենք բոլոր դեփարտիցիոններից դուրս կը գանք, մենք կը վերականգնենք մեր պարտքը . և բանվորները իրենց պարտքը կվերադարձնեն հարյուրապատիկով»*) :

Ծնորհիվ հնգամյա սլլանի առաջադրանքների գե-րակատարման, նամանավանդ ծանր արդյունաբերու-թյան և գյուղատնտեսական մեքենաների շինարարու-թյան ընդլայնում, մենք հնարավորութուն ձևոք բերինք գյուղատնտեսության մեջ հսկայական ներդը-րումներ կատարելու, տեխնիկայես ղինելու գյուղա-տնտեսությունը և ամրապնդելու ծավալվող կոլտնտե-սական շարժման, խորհրտնտեսությունների և մեքենա-տրակտորային կայանների նյութական բազան: Բավա-կան է թվել միայն այն ներդրումները, վոր կատարել է պրոլետարական պետությունը գյուղատնտեսության մեջ 1931 թ., վորպեսզի հասկանալ ինչպես «բանվոր-ներն իրենց պարտքը վերադարձնում են գյուղացուն հարյուրապատիկ» :

Գյուղը 1931 թ. ստանում է 120 հազար տրակ-տոր, 768 միլ. ո. գյուղատնտեսական մեքենաներ, 145 միլ. ո. հանքային պարարտանյութեր, 1050 միլ. ո. վարկ, 21 միլիոն ցենտներ տեսակավոր սերմեր: Գյու-ղում կազմակերպվում է 1040 նոր մեքենա տրակտորա-յին կայան, 489 վուչի թրմիչ (լենուպենկովի) գործա-րան, 10 հազար հատ լենուտերի բիլկաներ (վուչի մշա-կույթի գործարան): Բամբակի, վուչի և այլ տեխնի-կական կոլտնտեսների ցանքատերերի կարիքների հա-

*) Լենին, — հատոր XVI, յերես 419.

մար միլիոնավոր ցենտներ հաց, տասնյակ և հարյուր հազարավոր աշխատակիցներ — ագրոնոմներ, տեխնիկ-ներ, և այլն և այլն: Այդ թվերի նշանակութունը մեղավելի պարզ կը լինի, յեթե հիշենք Իլիչի խոսքերը .

«Յեթե վաղը մենք կարողանայինք 100 հազար ա-ռաջին կարգի տրակտորներ տալ, մատակարարելինք նրանց բեղին, մատակարարելինք մեքենավարներ, — դուք լավ գիտեք, վոր այժմս դա ցնորք է, — այն ժա-մանակ միջակ գյուղացին կասեր՝ «յես կոմունայի կազմակերպ եմ» :

Տարեց տարի գյուղի մեքենայացումը դարգանում է արագընթաց տեմպերով . յերկրի ինդուստրացումը հանդիսանում է վողջ գյուղի և այդ հիմունքով հատի-կային պրոբլեմի լուծման սոցիալիստական վերակա-ռուցման ուժեղ լծակը :

Արդեն 1931 թ. վերջում մենք գյուղում կունենանք 200 հազարից ավելի տրակտոր (փոխարինելով 10- ու-թեղայիններով) :

Դեռ 1929 թ. մեր սոցիալիստական դաշտերում աշ-խատու կոմբայնների թիվը հասնում էր 42, 1930 թ. նրանց թիվը հավասարվում է 1606, իսկ 1931 թ. սո-ցիալիստական խոչոր տնտեսությունն ունենալու յե մոտ 6 հազար կոմբայններ, վորոնց գլխավոր մասան սե-փական, խորհրդային արտադրություն է :

Պրոլետարական իշխանությունն աճող կոլտնտե-սական շարժմանն ամեն տեսակի ոժանդակություն է ցույց տալիս, քանի վոր, ինչպես նշել է Լենինը կոո-պերացիայի վերաբերյալ յուր հայտնի հոդվածում . «յուրաքանչյուր հասարակակարգ ծագում է առնում մի-այն վորոշ դասակարգի ֆիլանստիկա աջակցության պայմաններում» :

4. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԵԿՏՈՐԸ ԼԱՅՆԱՑՆՈՒՄ Ե ՑԱՆՔՍԸ, ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ Ե ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ԱՎԵԼԱՑՆՈՒՄ Ե ԱՊՐԱՆՔԱՑՆՈՒԹՅՈՒՆԸ

Տարեց տարի ավելանում է հատիկային կուլտուրաների ցանքերի տարածությունը, բարձրանում է նույնպես հատիկային անտեսությունների բերքատվությունը և ապրանքայնությունը: 1930 թ. արդեն մեկ կուլտիվացիայի անտեսության միջին ցանքը յերկու անգամ գերազանցում է մեկ մենատեսաստիքով ցանքից, 1931 թ. կուլտիվացիայի անտեսության մեջ չեղած մեկ անտեսության միջին ցանքը բարձր է մեկ մենատեսաստիքով միջին ցանքից համարյա թե յերեք անգամ: Պիտանի յեն դարձվում նորանոր հողակտորներ. 1928—29 տ. հատիկային կուլտուրաների ցանքի տարածությունն ավելացել է 10 միլ. դա, իսկ անցած (1930—31 թ.) դյուրանտեսական տարվա համեմատությամբ, — համարյա 4 միլ. դա:

Հատիկային կուլտուրաների ապրանքային մասուն, համեմատած 1927/28 թ. հետ, արդեն անցյալում (1930—31 տ.) անել է յերկու անգամ:

Պորճրդային իշխանության դոյուլթյան առաջին տարում մթերված էր 18 միլ. ցենտ. հաց, սա 1918/19 տարիներումն էր: Հետագայում զարգացումը գնաց հետեվյալ ուղղությամբ.

Տ Ա Ր Ի Ն Ե Ր
Մթերված է մի ցենտներնեով

| | |
|---------|-------|
| 1919—20 | 35 |
| 1920—21 | 46,7 |
| 1921—22 | 65,5 |
| 1922—23 | 70,0 |
| 1923—24 | 71,8 |
| 1924—25 | 51,3 |
| 1925—26 | 95,1 |
| 1926—27 | 116,0 |
| 1927—28 | 110,0 |
| 1928—29 | 108,0 |
| 1929—30 | 160,0 |
| 1930—31 | 221,3 |

337/8
1/153

Վերելում բերված յուրաքանչյուր թիվը հանդիւանում է հացի համար 14 տարվա պայքարի պատմության ամբողջ մի էջը:

1919 թ. Վլադիմիր Իլիչը, խոսելով մեր պարենափորման աշխատանքների հաջողության մասին, նշում էր.

«դժվար թե հնարավոր լինի յտրիդային իշխանության գործունեյության մյուս բնագավառում այդպես նշտորեն րնորոշել հայտնությունը»:

Պորճրդային իշխանության դոյուլթյան առաջին տարում հավաքված էր 18 միլ. ցենտ. հաց, հինգ տարի հետո, այդ թիվն ավելացավ չորս անգամից ավելի, իսկ ընթացիկ տարում համարյա թե 14 անգամ:

Բայց այժմս արդեն ունենք յտրճրդային իշխանության գործունեյության «ճշտված վորոշիչը» վոճ միտյն հատիկային, այլ և ժողովրդական անտեսության բոր ընազավառներում:

Այժմս հացամթերքի կուլտուրայում հատիկի



ապրանքային մասի մոտ $\frac{2}{3}$ մենք ստանում ենք խորհ-
տնտեսութժյուններից և կոլեկտիվ տնտեսութժյուններից:

1929/30 ա. ներառյալ միջին գյուղացիութժյունը
հանդիսանում էր հատիկի հիմնական արտադրողը և
մեր հողագործութժյան կենտրոնական դեմքը:

Այժմս արդեն կոլտնտեսականը դարձավ հիմնական
հատիկի արտադրողը: Զբաղարի և միջակի դերը-այ-
սինքն մեկատնտեսատիրոջը, գյուղատնտեսութժյան
արտադրութժյան մեջ դարձավ յերկրորդական: Արդեն
միջին գյուղացիութժյունը չի հանդիսանում մեր հողա-
գործութժյան կենտրոնական դեմքը: Կոլտնտեսական
գյուղացիութժյուն, ահա այժմյան գյուղատնտեսու-
թժյան կենտրոնական դեմքը, վորն արագորեն աճում է
յուր սոցիալիստական վերակառուցման ուղիներով:
Կոլտնտեսական գյուղացիութժյունն արդեն և այժմս
հանդիսանում է հիմնական արտադրողը վոչ միայն
հատիկի, այլ և գյուղատնտեսական կարեվորագույն
հումուլթի (բամբակի, ճակնդեղի, արեվածաղկի)
բնադավառում:

Հատիկի պրոբլեմի լուծման վոչ պակաս կարև-
վոր ցուցանիշ է հանդիսանում այն փաստը, վոր կու-
տնտեսութժյան մեջը համախմբված չբավորա-միջակու-
յին տնտեսութժյունները տալիս են հատիկային տնտե-
սութժյան վալույնը հավաքի 25-30 տոկ. և ալեւին վոր-
պես ապրանքային յեւույթ, այն ժամանակ, յերբ մանր
ու փոշիացած գյուղացիական տնտեսութժյունները տա-
լիս եյին վորպես ապրանքային յեւույթ հատիկային
տնտեսութժյան վալույնը յեւույթի միայն 10-15 տոկ.:

Հատիկային պրոբլեմի լուծման տեսակետից ամե-
նահիմնական ֆակտորն է հանդիսանում նույնպես պա-

րենավորման հացի ապրանքային արտադրութժյան տ-
նումը: 1928/29 թ. մթերված էր 5311 հազար տոնն
աղորագորեն (տարեկան) և ցորեն. 1929/30 թ.—8007
հազար տոնն, 1931-32 թ. 12,889 հազար տոնն: Մենք
վոչ միայն փոխարինեցինք հատիկի կուլակութժյան ար-
տադրութժյունը մեր խորհտնտեսութժյունների, կոլ-
տնտեսութժյունների և մեքենա-տրակտորային կայան-
ների արտադրութժյունով, այլ և մենք կալվածատերերի
և կուլակների հատիկի նախապատերազմյան արտա-
դրութժյանը փոխարինեցինք:

5. ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄՏԿ-ՆԵՐԸ ՅԵՎ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՐՁՐԱՑ- ՆՈՒՄ ՆՆ ՀԱՏԻ ՎՈՐԱԿԸ ՅԵՎ ԻՋԵՅՆՈՒՄ ԻՆՔՆԱՐԺԵՔԸ

Հացամթերման կազմակերպման գործում մենք
ձեռք բերեցինք խոշորագույն հաջողութժյուններ:
Հայտնի յէ, վոր և հացամթերման կազմակերպման
բնադավառում աջերը և «ձախ» ոպորտունիստներն աչ-
խատում եյին կամ ամբողջ գործը թողնել ինքնահոսի
(աջերը), կամ ել հարցը լուծել լոկ վարչականու-
թժյամբ (ձախերը): Հակառակ հացամթերման կազմա-
կերպման ոպորտունիստական ձեվերի, կուսակցութժյու-
նը և՛ այդ բնադավառում, յուր բայլչեվիկյան գծի առ-
չեղ կիրառումով, ձեռք բերեց իրոք խոշոր հաջողու-
թժյուններ:

Վերցնենք հացամթերման գործի կազմակերպման
բնադավառից միայն մի զանի հարցեր:

Գնեիի քաղաքականութժյան հարցը: Կուսակցու-

թյունն ուժեղ պայքար է մղել այսպես կոչված շուկայի «նորմալացման» տեսութան, շուկայում գների ազատ խաղի, մթերման գների անընդհատ բարձրացման դեմ: Մթերման գների աճումը մեծ մասամբ հետեվանք է խորհրդային իշխանութան ոժանդակութամբ արտադրվող հատիկի վորակի լավացման: Վորժե շուկայի գների ազատ խաղն է, այլ ցանքսերի համար դյուղատնտեսութանը տեսակավոր սերմացունների սխտեմատիկաբար մատակարարումն է նպաստում սերմերի վորակի լավացման և վերահիշյալ գների բարձրացման:

Կառավարության կողմից վորոչված հացի մեկ ցենաների մթերման գինը վճարվում է հանձնվելիք հացի վորոչ հատկանիշներից յերնելով (այսպես կոչված բաղեսային կոնդիցիա—հատիկի «բնականը», խոնավությունը և տեսակավոր լինելը):

Հացի մթերման պետական սահմանված գինը լիովին վճարվում է տվյալ շրջանի հատիկի և տվյալ կուլտուրայի միջին հատկանիշների առկայության ժամանակ: Բայց վորովհետև, շնորհիվ խորհրդային իշխանութան ձեռք առած միջոցների, վերջին տարիներում հատիկի հատկությունը դերազանցեց պետական վորոչված միջին նորմաներից, դրա համար ել հատիկ հանձնողները ստանում են մթերման գներին գերազանցող, իրենց արտադրածի գինը: Այժմ, տեսակավոր ցանքերի բավականին լայնացման և հատիկի վորակի բարձրացման պայմաններում, մեմ կարող եմք և պետք է առող կոլեկտիվ և խորհրդային հատիկային տնտեսություններից, հատիկի վորակի վերաբերյալ,

ավելի պահանջկոտ լինեմք, քան մեմք յեղել եմք վերջին 3 տարիներում:

խորհանտեսությունները և կոլտնտեսությունները կուտակցության դեկավարությամբ, իրենց մասսայական դոյության 2-3 տարիների ընթացքում, կոր ի գլուխ ջախջախեցին Կոնդրատեմերի, Չայանովների և աջ ուղորտունխտական բանակից, նրանց աղենաների տեսությունները՝ մանր մեխանտեսությունների առավելությունների մասին հանդեպ խոչոր, կոլեկտիվ տնտեսությունների: խորհանտեսությունները և կոլտնտեսություններն ապացուցեցին, վոր սոցիալիստական խոչոր դյուղատնտեսությունը բավական չափով իջեցնում է հատիկային արտադրանքի իմեքարժեքը և միաժամանակ բավական չափով բարձրացնում է հատիկի վորակը: «Գիզանտ» խորհրդային տնտեսությունում պարզվեց, վոր աղորացորենի և ցորենի ինքնարժեքը յերկու անգամ ցածր է 1929/30 թ աղորացորենի և ցորենի մթերման գների համեմատությամբ:

«Գիզանտ»-ի հաջողությունները, հատիկի ինքնարժեքի իջեցման գործում, բացառիկ յերեվություններ չեն: Նրանք հանդիսանում են խորհանտեսությունները, ՄՏԿ-ների, կոլտնտեսությունների վարդացման ուղիով, հատիկի եժանացման խոչորագույն հաջողությունների ցուցանիշը: Մենք մի շարք այլ թվեր կարող ենք բերել ուրիշ խորհանտեսությունների, կոլտնտեսությունների և ՄՏԿ-ների վերաբերյալ, վորոնք կապացուցեցին հատիկի ինքնարժեքի խոչոր չափով իջեցումը մեր սոցիալիստական խոչոր տնտեսություններում՝ դյուղացիական մեխանտեսությունների համեմատությամբ:

Խորհումտեսությունների զարգացման և աշխատավարձերի գյուղացիության մեծամասնության կուլե-տիվ շինարարության ուղին անցնելու հետևանքով, մեր յերկիրը դարձավ վաղ միայն գյուղատնտեսության ամենախառն յերկիրն աշխարհում, այլ և միաժամանակ դառնում է խոշորագույն չափերով եժամ հատիկ արտադրող յերկիր :

6. ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻԱՑԻ ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄԹԵՐՈՂ ԱՊԱՐԱՏԻ ՌԱՑԻՈՆԱԼԻԶԱՑԻԱՆ ՅԵՎ ՀԱՑԱՄԹԵՐՄԱՆ ԾԱԽՔԵՐԻ ԿՐՃԱՏՈՒՄԸ

Մեր և գյուղի փոխհարաբերություններում լուրջ հաջողություններից մեկը հանդիսանում է կոնտրակտացիայի հաջողությունը: Յուր ժամանակ աջ ուսուր-տունիստները դրոճեյին տալիս նույնպես կոնտրակտացիայի մեթոդների դեմ: Նրանք կոնտրակտացիան ՆեՊոն, հակասող հանգամանք էյին ընդունում. նրանք չեյին հասկանում, վոր «կոնտրակտացիայի մեթոդը հանդիսանում է գյուղի և քաղաքի միջև ապրանքա-չրջանառության նոր ձեվերի հաստատման հիմնական մեթոդը»^{*)}. 1928 թ. հատիկային ցանքերից կոնտրակտացիայի յեր յենթարկված միայն 1700 գա, 1929 թ.— 20 միլ. գա, 1930 թ.— 50 գա, և վերջապես 1931 թ.— 75 միլ. գա:

Վերջին տարիների ընթացքում կոնտրակտացիոն պայմանագրերով ստացված հացի քանակը սուր կերպով բարձրացավ: Յեթե 1928/29 թ. կոնտրակտացիայի

^{*)} Ստալին. — «Լենինի գաղտնի հարցեր», յեր. 300.

յենթարկված հացը կազմում էր ընդհանուր մեթերում-ների 6,6%, սակայն 1929/30 թ. կոնտրակտացիան մեկ տվեց մեթերումների 35,7%, իսկ 1930/31 թ.— 64,4%: Թե կոնտրակտացիայի մեթոդները վորքան արագ են տարածվում և յուրացվում կոլտնտեսությունների և չբավորումիջակային տնտեսությունների կողմից, յերեվում է հենց թեև նրանից, վոր պարենավորման կուլտուրաների ապրանքային արտադրանքի կոնտրակտացիան վերջին տարիներում աճում է անասելի տեմպերով: 1928 թ. կոնտրակտացիայի յե յենթարկված 900 հազար գա ցորենի ցանքս, 1929 թ.— 10.800 հազար գա, 1930 թ.— 19.300 հազար գա, և 1931 թ.— 30 միլ. ավելի գա. ցորեն:

Արդեն մի քանի տարի յե, ինչ մի շարք տեխնիկական կուլտուրաներ մենք մեթերում ենք լիովին կոնտրակտացիոն պայմանագրերի հիմունքով: Գյուղատնտեսության ապրանքային արտադրանքի կոնտրակտացիան այժմս արդեն մասսայական մասշտաբով գործադրվում է նաև անասնաբուծական արտադրանքի մեթերումների բնագավառում:

Մեև արդեն մոտ եմ այն պայմաններին, վորպեսզի կոնտրակտացիայով ընդգրկեմ հատիկային տնտեսության վողջ ապրանքային արտադրանքը:

Կոնտրակտացիան, ինչպես ճիշտ ասված է Խորհուրդների VI համագումարի վորոշումների մեջ, կոլտնտեսության աճման պայմաններում, հանդիսանում է «կոլտնտեսությունների պետական ու կոպերատիվ տնտեսական կազմակերպությունների հետ տնտեսական փոխհարաբերության հիմնական ձեվերից մեկը»:

Վոչ պակաս կարեվոր են կուլտուրացիայի հաջո-

դուժյունները մթերման ապարատը կազմակերպելու վերաբերյալ: Դեռ 1925/26 թ. հացամթերման շուկայում աշխատում էին մոտ տասն և մեկ մթերող կազմակերպություններ, իսկ 1928 թ. մենք ունեյինք դեռ ևս վեց մթերող կազմակերպություններ: Վերջին յերկու տարվա ընթացքում կոլտնտեսությունների անումըն, կոնտրակտացիայի դերը ուժեղացումն և նորությունների, փորձերի և կադրերի կուտակումն մթերող ապարատում, հնարավորություն տվեցին կուտակություն հիմնականում միակ մթերող ապարատի (Հացանաանապահ կենտրոնի) միջոցով մթերումները կազմակերպելու սխեման անցնելու: Վերջապես հացամթերման կազմակերպման գործում կարեվորագույն հաջողությունը հանդիսանում է հացամթերումների գործառնությունների եծանացումը: Առեվտրավերադիր ծախքերի հարցը, վորով կուտակությունը սխեմատիկորեն զբաղվել է, վերջին տարիներում արդեն ստացավ իր լուծումը: Դեռ Կենտկոմի 1926 թ. հուլիսյան պլենումը հացամթերումների հարցի վերաբերյալ, ընդունեց հետևյալ դիրեկտիվան.

«Անհրաժեշտ է ձեռք առնել վճռական միջոցներ, հացի առևտրի ասպարիզում իջեցնելու բարձր վերադիր ծախքերը: Ընթացիկ կամպանիան հացի առևտրի ասպարիզում, հայտաբերեց անչափ բարձր վերադիր ծախքեր, վորի պատճառներն արմատացած են, ինչպես ապարատի վոչ ոացիոնալ կառուցվաքքի, վոչ արտադրական ծախքերի առկայություն, այնպես էլ վերադիր ծախքերի բարձրություն մեջ:

Ուստի առաջիկա կամպանիայի ընթացքում անհրաժեշտ է վերադիր ծախքերի վճռական իջեցում, վո-

րը կախում ունի մթերողներից, մինիմալ 15%-ի չափով՝ ապարատի ոացիոնալիզացիայի և աշխատանքի բարելավման միջոցով»:

Յեթև 1926/27 թ. մթերող որդաններում ծախքերի և կոմիսիոն վարձատրությունների նորմաները կազմում են մեկ ցենտների դիմաց 92 կ., սակայն 1930/31 թ. այդ ծախքերը կազմում են մթերված յուրաքանչյուր մեկ ցենտներ հացի դիմաց 50 կ. պակաս:

Սորհանտեսությունների, կոլտնտեսությունների և ՄՏԿ-ների անումով, ինչպես այդ ցույց է տվել վերջին տարիների փորձը, մենք միշտ ավելի և ավելի իջեցնելու յենք հացամթերման վերադիր ծախքերը: Այս դորձը մեզ կտա տասնյակ միլիոնավոր ռուբլիների խնայողություն, վորոնք ծախսվելու յեն ինդուստրացման և զյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար:

7. ՀԱՑԸ — ՀՆԳԱՄՅԱԿԻ ՅԵՐՐՈՐԴ ՏԱՐՎԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՎԸՃ- ՌԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆ Ե

1931/32 թ. հացամթերման կամպանիայի կազմակերպման հարցը վճռական նշանակություն է ձեռք բերում: Հնգամյակի յերրորդ վճռական տարվա պլանների կատարումն խոշոր չափով կախված է հացամթերման պլանների կատարումից, քանի վոր հացը հանդիսանում է հնգամյակը չորս տարում իրագործելու հիմնական նախադրյալներից մեկը:

«Տնտեսական հիմնական նախադրյալները, — վորոնցից կախված է հնգամյակի յերրորդ տարվա պլանի կատարումը — յերեք են:

«Առաջինը— հաց, յերկրորդը— տրանսպորտ և յերրորդը— վառելիք» : Ճիշտ և ասել ընկ . Մոլոտովը , վոր այս յերեք նախադրյալներից հացը հանդիսանում է վոչ թե առաջինը , այլ և հնգամյակի յերրորդ տարվա հիմնական նախադրյալը : Հացամթերման ճակատում յուրաքանչյուր ակտիվ աշխատող , յուրաքանչյուր կուտնտեսական , ՄՏԿ-ների աշխատակիցներ և բոլոր չքավորամիջակային տնտեսությունները պիտի լավ հիշեն հնգամյակի և հացամթերումների միջև յեղած այս անմիջական կապը :

Հնգամյակի առաջին յերկու տարիները հացամթերման ճակատում կուտակցության և ինքնուրույն իշխանության հաջողություններն ապահովեցին մեր սոցիալիստական ինդուստրիայի հետագա բուռն աճումը : Համկ(ը)ԿԿԿ-ի և ԿՎՀ 1930 թ. դեկտեմբերյան պլենումը , հնգամյակի առաջին յերկու տարվա արդյունքն ամփոփելիս և յերրորդ վճռական տարվա ծրագրերը նշելիս , պարզեց .

«Հնգամյակի առաջին յերկու տարիներում սոցիալիստական պետական արդյունաբերությունը տվեց ժողովրդական տնտեսության 30,5 միլի. ո. արտադրանք , հնգամյակով նախատեսված (անփոփոխ գնբով) 20,3 միլի. ո. փոխարեն :

Հնգամյակի առաջին յերկու տարիներում ծանր արդյունաբերությունը յերկրին տվեց 13,8 միլի. ո. արտադրանք , հնգամյակով նախատեսված 12,5 միլի. ո. փոխարեն» :

1930 թ. նավթային արտադրությունը կազմում էր 9,2 միլ. տ. , իսկ 1931 թ. — 27,5 միլ. տ. : Քարածուխը համեմատաբար . 29 միլ. տ. և 1931 թ. պլանը — 86

միլ. տոնն : Չուգունը — 4 1/2 միլ. տ. և 8 միլ. պողպատը — 4,2 միլ. և 8,8 միլ. , գյուղամեքենաների շինարարությունը — 70 միլ. և 815 միլ. ո. , ընդհանուր մեքենաշինարարությունը 398 միլ. և 4191 միլ. ո. :

«Յեվ հետեվանքը յեղավ այն , վոր Միության գործարանա-Ֆարրիկային արտադրության տարեկան չափը յերկու անգամ զերազանցեց նախապատերազմյան տարեկան արտադրանքին» :

ԿԿ-ի և ԿՎՀ-ի նույն պլենումը , հնգամյակի յերրորդ , վճռական տարվա պլանի վերաբերյալ վորոշեց «1931 թ. ԽՍՀ Միության ժողովրդական յեկամուտն ընդունել 49 միլի. ուր. սահմաններում (1926|27 թ. գնբով) հնգամյակի վերջին (1933 թ.) տարում յենթադրվելիք 49 միլի. 700 միլ. ո. փոխարեն :

ժողովրդական տնտեսություն (արդյունաբերություն , տրանսպորտ , գյուղատնտեսություն և այլն) համաձայնեցրած սեկտորի կապիտալ ներդրումների չափը վորոշել 17 միլիարդ ո. , ընթացիկ տարվա 10 միլիարդ ո. դիմաց : Լայն գործածության արդապրանքների Ֆոնդը 1931 թ. վորոշել 14 միլիարդ 600 միլիոն ո. , 1930 թ. 11 միլիարդ 500 միլ. ո. դիմաց :

Գյուղատնտեսության համայնացրած սեկտորի (խորհրդատնտեսությունների և կոլտնտեսությունների) կապիտալ ներդրումները վորոշել 3 միլիարդ 800 միլիոն ո. , վորոնց թվում պետական սեկտորում — 2 միլիարդ 55 միլիոն ո. և կոլտնտեսություններում ու ՄՏԿ-ներում — 1 միլիարդ 745 միլիոն սուբլի :

ժողովրդական կապի կապիտալ ներդրումների չափը 1931 թ. ընդունել 260 միլիոն ո. սահմաններում : Սոցիալիստական արդյունաբերության և ելեկտրոֆի-

կացիայի կապիտալ աշխատանքների չափը վերոջև 1931 թ. համար 7 միլիարդ 470 միլիոն ռ. սահմաններում :

Ընդունել բանվոր-ծառայողների ընդհանուր թիվը 1931 թ. համար 16 միլիոն մարդ, 1930 թ. 14 միլիոն մարդու գիմաց : Լուսավորության (կադրերի, գիտություն, առողջապահություն, սոցիալիստական սպահովադրություն) ֆինանսավորման ընդհանուր ֆոնդը ընդունել 6 միլիարդ 500 միլիոն ռ. սահմաններում» :

Արդեն մեզ բոլորիս հայտնի յեն մեր սոցիալիստական նոր կառուցվելիքների—գիզանանքի անունները, վորոնք տալիս են տասնյակ հազարավոր տրակտորներ, հազարավոր կոմբայներ, հարյուրավոր միլիոնների գյուղատնտեսական մեքենաներ և գյուղի պարարտացման համար հանքային նյութեր : Այս բոլորը պահանջում են, վորպեսզի պետությունը ձեռքը կենտրոնանա հացի ամբողջ ապրանքային արտադրանքը : Մյուս կողմից, աճող սոցիալիստական անասնապահությունը, նույնպես և տեխնիկական կուլտուրաների տարածման արագ տեմպերը պահանջում են, վոր յերկրի համապատասխան շրջանները սպահովվեն հացով : Բամբակի, վուշի, ձահնդեղի ցանքարարները, անասնաբուժական խորհանտեսությունները, անասնաբուժական կոլտնտեսային ֆերմաները չեն կարող իրենց աշխատանքները ծախվել, առանց համապատասխան քանակությունը հացով և ֆուրաժով սպահովված լինելու : Միևնույն ժամանակ մեր յերկրի արդյունաբերությունից և գյուղատնտեսությունից մեքենաների և արտադրությունից այլ միջոցների ներմուծման անհրաժեշտությունը պահանջում է մեզանից արտահանման համար հացի առանձին ֆոնդ

առանձնացնել : Այսպիսով պարզ է, վոր կուլեկտիվացող գյուղատնտեսությունը մեքենաներով և պարարտանյութերով լրիվ ապահովելու, հնգամյակի յերրորդ վճռական տարին իրագործելու և մատակարարման պրորբլեմը հիմնովին լուծելու համար—կուլեկտիվ և չքավորա-միջակային տնտեսությունները պետք է այնպես կադավակերպվեն, վորպեսզի իրենց ապրանքային արտադրանքը ծախեն խորհրդային պետությունը և բոլոր միջոցները ձեռք առնեն, վորպեսզի վոչ մի ցենտներ հաց մասնավորի ձեռքը չընկնի :

8. ՀԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍԸ ՏՍԼԻՍ Ե ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԵԿՏՈՐԸ

Առաջիկա հացամթերման կամպանիան շատ բանով տարբերվում է բոլոր նախընթաց կամպանիաներից : Սրա առանձնահատկություններից հիմնականը հետևյալն է : Այս տարվա հացամթերման գլխավոր մասը (2/3-ից վոչ պակաս) պիտի տան խորհանտեսությունները, կոլտնտեսությունները և ՄՏԿ-ները : Խորհրդային իշխանությունից գոյություն ունեցող ժամանակամեջում առաջին անգամն է, վոր մենք իրագործում ենք հացամթերման այնպիսի պլան, վորին խորհանտեսությունները մասնակից յեղան, վորպես հատիկի մասսայական արտադրողներ, կոլտնտեսություններ—վորպես գյուղացիական տնտեսությունների ապրանքային արտադրանքի մոտ յերկու յերրորդի հայրաբայողներ, իսկ ՄՏԿ-ները հանձնում են պրոլետարական պետությունը 1924-25 թ. ամբողջ տարվա ընթացքում մթերված հացից ավելին : Արդեն 31 թ. խորհանտեսություն-

ները, կոլտնտեսութիւնները և ՄՏԿ-ները բացարձակորէ՛ն գերակշռում են գյուղի մենատնտեսային սեկտորին: Հատիկային կուլտուրաների ցանքի տարածութեան մոտ 70 տոկոսը կաատրել են խորտնտեսութիւնները, կրտնտեսութիւնները և ՄՏԿ-ները: 1. մոտ մէկ յիսուրդն — մենատնտեսային սեկտորը: 218900 կոլտնտեսութիւններ 1227 ՄՏԿ, Ծաքարատրեատի 207 խորտնտեսութիւնները ու Հատիկային տրեստի 188 խորտնտեսութիւնները կտան դյուղատնտեսութեան ապրանքային արտադրանքի $\frac{2}{3}$ -ը, իսկ մոտ 12 միլիոն դյուղացիական տնտեսութիւններ — $\frac{1}{3}$ -ը: Սա նշանակում է, վոր պրոլետարական պետութիւնն արդեն առաջիկա կամպանիայի ընթացքում ապրանքային հացի հիմնական մասը ստանալու յետ 235 հազար խոշոր խորտնտեսութիւններից և կոլեկտիվ տնտեսութիւններից:

Միայն այս հանգամանքը հիմնովին տարբերում է ընթացիկ կամպանիան նախընթաց տարվա կամպանիայից: Այս պայմաններում հացամթերման կամպանիան առաջադրում է մեզ տեխնիկական և կազմակերպչական հարցերում հույժ կարեւոր խնդիր: Առաջիկա հացամթերման կամպանիան մենք անցկացնելու յենք այնպիսի պայմաններում, յերբ շրջանները, գալառների լիկվիդացիայից հետո, ուժեղ վտարի կանդնեցին և անմիջապէս կապվեցին մարդային կենտրոնի հետ: Հետո, այս տարվա հացամթերման կամպանիան սկսվում է վոչ թէ այն պայմաններում, յերբ մենք ունենինք համարյա թէ մանր յերիտասարդ կոլտնտեսութիւններ, այլ բոլորովին ուրիշ պայմաններում: Մենք արդեն ունենք հին, ամրապնդված կոլտնտեսութիւնների խոշորագույն մասսն, տասնյակ հազարավոր կոլտնտեսա-

կան կազմակերպիչների և տնտեսավարների հասունացած կադրերով, և վերջապէս այն պահին, յերբ շնորհիվ խորտնտեսութիւնների և ՄՏԿ-ների աճման, դյուղում հիմնվում է խորտնտեսութիւնների և ՄՏԿ ների բանվորական կորիզը: Մենք դեռ չենք խոսում այն մասին, վոր կոլտնտեսութիւնների, խորտնտեսութիւնների և ՄՏԿներում կուսակցական և կոմյերիտական բջիջները բավականաչափ աճումը և խորհուրդների հետադա ամրապնդումը խոշոր չափով փոխում են հացամթերման կամպանիայի պայմաններն անցյալի համեմատութեամբ: Անհրաժեշտ է, վոր վերահիշյալ բոլոր բարենպաստ պայմանները լիովին ոգտագործվեն ընթացիկ հացամթերման կամպանիայի համար:

9. ՀԱՅԱՄԹԵՐՈՒՄՆԵՐԸ ՍԿՍՎՈՒՄ ԵՆ ԲԵՐՔՍ, ՀԱՎԱՔԻ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՀԵՏ

Բերքահատվաքի կազմակերպման խնդիրը, վորն այնպէս սուր դրված է կուսակցութեան առաջ, հանդիսանում է հատիկի պրորլեմի վերջնական լուծման գործի կարեւորագույն ողակը:

Անցյալ տարվա բերքի ռեալիզացիան հայտաբերեց բերքահատվաքի կազմակերպման գործում մի շարք թերութիւններ, վորի հետեւանքով մենք հնարավորութիւն չունեցանք մի շարք տեղերում լիովին ոգտագործել կոլտնտեսութիւնների և խորտնտեսութիւնների հաջող բերքը:

«... Անցյալ տարվա փորձը ցույց է տալիս, վոր բավականանալ կոլեկտիվացման և ցանքի կամպանիայի հաջողութիւններով և թերազնահատել կոլտնտեսութիւնների ամրացման և բերքի հավաքի ասպարիզում»

յեղած խնդիրները ամբողջ լրջութեամբ, — կնշանակէր խոշոր վնաս հասցնել կոլեկտիվացման գործին»*) :

Սա վոչ պակաս չափով վերաբերում է նույնպէս և խորհանտեսութեաններին : Ի դուր չեմ, վոր կենտրոնի հունիսյան պլենումը խոսելով խորհանտեսութեանները բերքահաւաքի կամպանիայի մասին, ընդգծեց .

«Խորհանտեսութեաններում նույնպէս բացասաբար է անդրադարձել աշխատանքի վրա՝ մեքենաների վատ ոգտագործումը, գիմագրկութեանը, խորհանտեսութեանները դեկալարող կազմերի կողմից բերքի հավաքի հետ կապված գծավարութեանների թերազնահատումը, և աչքաթող անելն այն հանգամանքի, վոր խորհանտեսութեանները, վորպէս ասլրանքային պրոգնոզիա արտագործներ, վոչ միայն պիտի ցանեն, այլ և պարտավոր են համաձայն պետութեանը իրենց արտագործութեանը, վորտչված քանակութեամբ և վորտչված ժամկետին» :

Գարնան ցանքաը ցույց տվեց, վոր մենք սովորել ենք կարն ժամանակամիջոցում հարվածային կարգով կատարելու այդպիսին :

Մեզ անհրաժեշտ է գործադրել մեր բոլոր կազմակերպչական և տեխնիկական հնարավորութեանները և նույնպէս ցանքի ծրագրի կատարման գործի փորձը լայնորեն ոգտագործել հավաքի կամպանիայում, վորպէսզի մեքենաների լրիվ ոգտագործմամբ, կոլտնտեսականների աշխատանքների կազմակերպմամբ, գործարքային սիստեմի և սոցիալիստական մեթոդների (սոցմըր ցում և հարվածայնութեան) գործադրման հիմունքներով հասնել անպիսի բերքահաւաքի, վորը վերացնի ամեն տեսակի կորուստները :

*) Համ Գ(բ) Կ. Կ. Կ. 1931 թ. հունիսյան պլենումի բանաձևից :

Լավ կազմակերպված հավաքի կամպանիան ապահովում է հացամթերման թե պլանի կատարումն և թե կրճատում է նրա ժամկետը : Ահա ինչու համար, կուսակցական, խորհրդային, կոլտնտեսութեան, մթերող և այլ կազմակերպութեանների բոլոր ուժերը պիտի կենտրոնանան հավաքի կամպանիայի կազմակերպման և նրա անցկացման շուրջը : Հավաքը յար բոլոր կազմերով անշուշտ պիտի կապված լինի հացամթերումների հետ : Հենց հավաքի կամպանիայի պրոցեսում պիտի ավարտվի հացամթերումների նախապատրաստական աշխատանքները : Դեռ ավելին . հավաքի կամպանիայի ընթացքում պետք է մթերել յերկրի աճող պահանջի բավարար հաց :

10. ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՅԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼ ՀԱՅԱՄԹԵՐՈՒՄՆԵՐԸ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԳԼԵԱՎՈՐ ԳԾԻ ՀԻՄՈՒՆՔՈՎ

Կուսակցական, խորհրդային, մթերող և այլ կազմակերպութեանների հիմնական խնդիրը առաջիկա հացամթերումների կամպանիայի ընթացքում պիտի լինի հացամթերումն կազմակերպումն և նրա ավարտելը կուսակցական գլխավոր գծի հիմունքով :

Անհրաժեշտ է հացամթերումների ասպարիզում մեր պրակտիկ աշխատանքի յուրաքանչյուր քայլը խնայող և շարժող կուսակցութեան գլխավոր գծի, գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման հետագա քաղաքականութեան, ԽՍՀՄ հատիկային և հումուլթային շրջաններում համատարած կոլեկտիվացման ծավալման հիման վրա կուլակութեան՝ վորպէս դասակարգի՝ վերացումն ավարտելու խնդիրների հետ :

Հացամթերումների դերը մեծ է գյուղացիական տնտեսությունների կուլեկտիվացման գործի մեջ: Այս ասպարեցված է անցյալ տարվա Հացամթերումների փորձով:

«Կուլեկտիվ շարժումն մեջ,—ասել է ընկ. Ստալինը,—ամենից առաջ ընթանում են հասարակային շրջանները: Ինչո՞ւ համար. նախ նրա համար, վոր այդ շրջաններում մենք ունենք քանակությամբ ամենաշատ արդեն ամրացած խորհրդատեսություններ և կոլտնտեսություններ, վորոնց շնորհիվ գյուղացիները հնարավորություն ունեցան համոզվելու նոր տեխնիկայի ուժին և նշանակությունը, տնտեսության նոր կուլեկտիվ կազմակերպման ուժին և նշանակությունը: Յերկրորդը, նրա համար, վոր այդ շրջաններն ունեն հացամթերումների կամպանիայի ընթացքում կուլակաւթյան դեմ տարած պայքարի յերկու տարվա դալոց, վորպիսի հանգամանքը չի կարող չթերթվացնել կոլտնտեսային շարժական գործը»*):

Անցյալ տարի համարյա թե բոլոր մարզերում, հացամթերումների պրոցեսում, մենք ունեցել ենք չքավորամիջակային տնտեսությունների կուլեկտիվացման վերելք: Այդպես, Ներքին Վոլգայի Ալեքսեյան շրջանում հացամթերումների սկզբում (հուլիս) կոլտնտեսությունները կազմում էին 33 տոկոս, իսկ հացամթերումների վերջին (հունվար)—75 տոկոս: Թալովի շրջանում Կ. Ս. Մ. (Մ. Վ. Օ) հացամթերումները սկզբում կուլեկտիվացման են յենթարկված 29 տոկոս, վերջում (դեկտեմբեր) —52 տոկոս և այլն:

*) Ստալին.—«Գլխապտույտի հաջողություններից», ընդգծումներն իմն են. Ե. Ս.:

«Գյուղացիության շրջադարձը դեպի կուլեկտիվ միանգամից չսկսվեց: Նա նախապատրաստվում էր կուլեկտիվյան դեմ վճռական պայքարի քաղաքականությամբ և մեր հացամթերումների 1928 և 29 թ. թ. նոր ձևվերի ընթացքով, վորոնք կուլակային տնտեսություններին դնում էին չքավորամիջակային տնտեսությունների հսկողության տակ:»²

Հացամթերումների հաջող ավարտումը հնարավոր է միայն կուլակցության գլխավոր դժի հետեւողական իրազորման, աջ ուղորտունխտական պրակտիկայի և ինքնահասի թերթիայի, «ձախ» խոտորոցների, կուլակային տարբերի և նրանց ազխտացիայի, հացի չարաչահողների, հացի պետական դների տասարյամանը և հացամթերումների դանդաղեցմանը ձգտող մասնավորի դեմ մղվող վճռական պայքարի հիման վրա:

Աջ ուղորտունիղմը հացամթերումների պրակտիկայում հանդես է դալիս ակնհայտ կամ քողարկված դիմադրություններ, նույնպես և հացի պլանների դեմ ազխտացիայի («պլանը ուեալ չի, անիրազործելի յե») ձեւվերով, հացամթերումների իրական հնարավորությունների պակասեցման, ինչպես և հացամթերումների աչխտանքի տեմպերն իջեցնելու, հացի մթերումը կայարանամերձ կետերն ու նավահանգիստները տեղաիոխելու գործից անջատելու, իրական հացամթերումները այդպես կոչված պահպանման ստորադրություններով մթերման ձեւով (заготовки под сыраные расписки) փոխարինելու ձգտումով և այլն:

Աջ ուղորտունխտները կուլակ-ունեւլորային աղնտեսություններ չեն գտնում, չեն տեսնում նրանց այնտեղ, վորտեղ նրանք կան. նրանք գործնականում բոլոր

*) Ստալին.—«Լենինի գովի հարցեր», յեր. 335,

միջոցները ձեռք չեն առնում «վոչ մի ցեխոններ հաց մասնավորին» բողոնդի լրիվ կիրառման համար, հացի չարաչափության դեմ անխնայ պայքար չեն մղում: Այլ ուղորտունիատական պրակտիկան հացամթերման դործում արտահայտվում է նաև նրանում, վոր չեյին ցանկանում այնպես կազմակերպել մթերումները, վորպես զի մենատնտեսատիրոջ կողմից պետութանը վաճառվող հացի ամեն մի հեկտարի նորման համապատասխան շրջանների կոլխոզնիկներին կողմից վաճառվող հացի նորմայից ցածր չլինի: Այլ ուղորտունիատները հացամթերման պլանները մենատնտեսատերերից տեղափոխում եյին կոլտնտեսականների վրա:

Այլ ուղորտունիզմը պրակտիկայում արտահայտվում է ինդիվիդուալիստական մնացորդների (перешитое), սոկոուլութան, ու կոլխոզնիկների առանձին խմբերի վրա յեղած կուլակային ազդեցութունների («առաջ մեղ, հետո պետութանը») դեմ մղվող պայքարի թուլութան, կոնտրակտացիոն պայմանագրերը սպառման նորմաների և առանձին տնտեսութունների այդպես կոչված «հացի բալանսներ» վորոչելը, ոլրակատիկայով փոխարինելու ձգտումների մեջ:

Փոխանակ հացամթերումները կազմակերպելու ասպարիզում առորյա և վճռական աշխատանք տանելու, աջ ուղորտունիատներն իրենց հույսը դնում են ինքնահոսի վրա, միաժամանակ հրաժարվելով աշխատանքի սոցիալիստական մեթոդների, ոոցմըցման ու հարվածայնութան և հասարակական մասսայական աշխատանքների մյուս ձեվերի լայն կիրառումից: Ինչպես սոցիալիստական շինարարութան մյուս բնագավառներում, այնպես ել հացամթերման ասպարիզում, աջ ու-

ղորտունիզմը հանդիսանում է սովյալ ժամանակի պայքար վտանգը: Հացամթերումները պիտի կազմակերպել և տանել յիկու հակատում պայքարի հիմունքով: «Ձախ» խոտորումն պրակտիկայում, նախկին տարիներին հացամթերումների կամպանիաներում, դանադան ձեվերով և հանդես յեկել: Փոխանակ կոլտնտեսութուններում ու չքավոր-միջակային տնտեսութունների միջեվ կազմակերպչական մասսայական աշխատանք տանելու, դիմել են լուկ վարչականութան:

Առանց հաշվի առնելու սովյալ կոլխոզի աշխատանքի արտադրական պլանը (սերմացուի Փոնդեր կազմակերպելուց հրաժարվելը և այլն), հացամթերումների պլանը կազմելը, կուլակ-ոնենվորային տնտեսութունների նկատմամբ դործադրվող մթերումների մեթոդների կիրառումը չքավորա-միջակային տնտեսութունների վերաբերյալ (կայուն առաջադրանքներ չքավորա-միջակային տնտեսութունների համար), հավասարեցում և այլն:

Այս բոլոր «ձախ» խոտորումներն արգելք են հանդիսանում հացամթերումներին, նպաստավոր հող են տեղծում կուլակային ազիտացիայի համար, ամբացնում են դատակարգային թշնամու դիրքերը: «Ձախ» խոտորողների համար հատկապես յուրահատուկ են՝ դործնականում հրամանների լայն կիրառումը, հրամանատարութուն և ձգտել այդ ձեվով լիովին փոխելու հացամթերումների կազմակերպման վերաբերյալ կուսակցութան դատակարգային դիժը՝ կոլտնտեսութուններում և չքավորա-միջակային տնտեսութունների նրկատմամբ:

«Ձախ» խոտորողները չեն հասկանում, վոր հացա-

մթերումները հանդիսանում են կոլեկտիվացման տեմպերի ուժեղացման և մեր կոլտնտեսությունների ուժեղացման կարեվորագույն ողակը՝

Ինչպես աջ ոսկորտունիստներն, այնպես էլ «ձախ» խոտորոզները տապալում են հացամթերումները և ողնում են կուլակին ու շարաշահողին՝

Հենց նրա համար, վոր մենք ջախջախեցինք կուլակին, վոր «ավարտվում է ԽՍՀՄ-ի հատիկային և հումորովային շրջանների կուլակության վերացումը վորպես դասակարգի», կարող է պատահել, վոր առանձին աշխատակիցներ և նույն իսկ առանձին բջիջներ քերագնահատեն կուլակային տարրերի ակտիվությունը և նրանց պայքարը հացամթերումների դեմ: Մյուս կողմից, սրա հետ կապված այն, վոր ապրանքային հացի կեսից ավելին պիտի տան կոլտնտեսությունները, հնարավոր է նույնպես անհատական սեկտորի քերագնահատումն առաջիկա հացամթերման կամպանիայի ընթացքում, նամանավանդ սպառող շրջաններում: Անկասկած, վոր խորհանտեսությունների, կոլտնտեսությունների և ՄՏԿ-ների աճումը դյուրացնում է հացամթերումների կազմակերպումը: Սակայն սխալ կլինի մտածել, վոր կոլտնտեսությունների և ՄՏԿ-ների աճումը դուրս է բերում ասպարիզից հացամթերման կազմակերպման խնդիրը: Անհրաժեշտ է վոչ մի բոլոր չմոռանալ, վոր յերկրում դեռ մնում են 10-11 միլ. դյուրացիական մենատնտեսություններ. անհրաժեշտ է նաև չմոռանալ, վոր «կոլտնտեսություններում դեռ մնում են անհատական և նույն իսկ կուլակային աղբեղությունների մնացորդներ, վորոնք դեռ չեն անցել, բայց վորոնք անշուշտ պիտի անցնեն ժամանակի ընթացքում՝

կոլտնտեսությունների տարացում և նրանց մեքենայացման հնարավորության սահմաններում» (Ստալին): Ահա ինչու համար էլ առաջիկա կամպանիայի համար լիովին ուժի մեջ է մնում ընկ. Ստալինի ցուցմունքը. «Անհրաժեշտ է նախ և առաջ լուծարվի յենթարկել ինքնահոսի հոգեբանությունը, վորպես վնասակար և վտանգավոր գործի: Անհրաժեշտ է կազմակերպել հացամթերումները»*):

11. ՀԱՅԱՍՏԹԵՐՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Հացամթերման կազմակերպման գործի մեջ կարևորագույն նշանակություն ունեն պլանավորման հարցերը՝ պլանը պուղ, կոլտնտեսության հասցենը, Մ. Տ. Կ. և խորհանտեսությունների պլանների կազմումը և այլն: Ոսկորտունիստական պրակտիկան հաճախ հանդես է գալիս հացամթերումների գործի պլանավորման խնդրում: Անցյալ տարվա հացամթերման փորձը ցույց տվեց, վոր սովորել ենք հացամթերումները ճիշտ պլանավորման յենթարկել, չնայած Գրոմանովի և Կոնդրատևիների պես վնասարար տիպերի փորձերին՝ հացամթերման գործի պլանավորումն փոժեցնել, հոգուտ պուղի կապիտալիստական տարրերի: Հատուկ ուշադրություն պիտի դարձնել, վորպեսզի հացամթերումների պլանավորման ժամանակ ճիշտ հաշվեառնվեն շրջանում կոլտնտեսությունների, ՄՏԿ և մենատնտեսային սեկտորի պլանի բոլոր ելմեները:

Գյուղը և կոլտնտեսություն հասովելիք պլանների գործի, խորհանտեսությունների և ՄՏԿ պլանների փորձման, նույնպես և կոնտրակտացիայի և անհատ

* Սը թեղումը ՀամԿ(Բ) Կ, «Լեյնիսիզմի հարցեր», յեր. 526.

կոնսերվատիվների պարտավորաբերի ճշտման ամբողջ դործը պիտի անցկացնել վորքան կարելի յե շտապ և կարճ ժամկետում :

Հացամթերումների կադմակերպման գործի ամենալուրջ թերություններից մեկը հանդիսանում է շրջանների, կոլտնտեսությունների, գյուղերի պլանների վորոշման ճգճգումը: Անցյալ կամպանիաներից մենք փաստեր ունենք, վոր պլանները շրջաններին տրվում եյին նրանց գաժառի հաստատման որից մեկ ամիս հետո, ճգճգվում եյին սեկտորներին հանձնվելիք պլանների վորոշումները և ավելի շատ փաստեր կային պլանների գյուղ իջեցվելու, մանավանդ կուլակա-ունե վորային տնտեսությունների կայուն առաջադրանքները վորոշելու և կոլտնտեսությունների ու մենատնտեսատեր չքափորա-միջակային տնտեսությունների պարտավորաբերի ճշտելու ճգճգման վերաբերյալ: Հացամթերման կամպանիաի և նրա շտապ կադմակերպման կարեվորադույն պայմաններից մեկը հանդիսանում է պլանի բովկայի շտապ և վորոշված ժամկետին ավարտելը: Հացամթերման պլանների ստացման 10-20 որից հետո, շրջաններում պիտի ավարտվի պլանավորման աշխատանքը: Այդ ժամկետում յուրաքանչյուր գյուղ, յուրաքանչյուր կոլտնտեսություն և կանտրակտանտ պիտի ունենա արդեն հաստատված տարեկան պլանները և յուր պարտավորության քանակը: Յուրաքանչյուր կուլակ-ունե վորային տնտեսություն պիտի ունենա պետության վաճառելու հացի կայուն առաջադրանքը:

Անհրաժեշտ է ամենուրեք շրջգործկոմիտեներին կից ստեղծել շրջանային կոմիտիաներ, վորոնք համապատասխան կոլտնտեսությունների ներկայացուցիչներ

մասնակցությամբ վորոշում են կոլտնտեսությունների մթերումների պլանները: Անհրաժեշտ է նույնպես ամեն կերպ Սոյուզիսիերի և Տրակտորկենտրոնի որդաններին ոժանդակել՝ ՄՏԿ-ներում հացամթերումների պլանները վորոշելու համար: Հացանասնապահ կենտրոնի որդաններին ոժանդակելու համար, անհրաժեշտ է նրանց տրամադրել համապատասխան քանակությամբ աշխատակիցներ, վորպեսզի հնարավորություն ունենան վորքան կարելի յե շտապ վերջացնել յուրաքանչյուր կոնտրակտանտի պարտավորաբերի ճշտելու աշխատանքը: Հացամթերումների պլանավորման գործի համար անհրաժեշտ է կուսակցական, խորհրդային, մթերող, կոլտնտեսողմակերադության ուժերի մորթիլիզացիան, վորպեսզի սխալներից խուսափել և վճռական հարված տալ ոպորտունիստական բոյոր փորձերին, վորոնք ցանկանում են պլանները պակսեցնել, կամ ել այդ պլանները կադմել շնչերի սպառման նորմաների հիմունքով և այլն: Կոլտնտեսությունների պլանը պիտի կադմել վորթե այսպես կոչված «բայանների», կամ ել սպառման նորմաների վորոշման հիմունքով, այլ անհրաժեշտ է կադմել ապրանքային յեղութի հանձման (վաճառման) միջին նորմաների հիմունքով, համաձայն կոնտրակտացիոն պայմանագրերի: Վարյոյ արտադրանքի հանձման (վաճառման) այդ միջին նորմաները պիտի կանկրեստացնել յուրաքանչյուր շրջանի համար առանձին:

12. ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՄՏԿ ՀԱՅԱՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Կոլտնտեսային սեկտորի մթերումները, (ինչպես պլանավորումն, այնպես ել ծրագրի իրագործումն)

պիտի կազմակերպել կոլտնտեսականների հետ կնքած կոնտրակտացիոն պայմանագրերի հիման վրա, կուտընտեսութուններն առաջին հերթին պիտի իրադրծեն կոնտրակտացիոն պայմանագրերով իրենց վրա վերցրած բոլոր պարտականութունները: Անցյալ տարվա փորձի հիման վրա, ՄՏԿ-ներում ընդգրկված կոլտնտեսութունների ապրանքային յեւույթը պիտի հանձնել մթերող կազմակերպութուններին և այն ել անմիջապես մոտ կայարանային պետական կետերին, հիշելով, վոր «կոլտնտեսութունների ապրանքային յեւույթի համեմատման (ՄՏԿ ամբիջական արտադրական խնդիրն և համեմատման)»*) կոլտնտեսային սեկտորի մթերման գործի կազմակերպման համար: ԿԿ-ի հունիսյան պլանովի վորոշումները կոլտնտեսութունների աշխան ցանքի վերաբերյալ կարեւորագույն նշանակութուն ունեն:

«Կոլտնտեսականների մեծամասնութւյան վորոշմամբ կոլտնտեսութունների նոր անդամների աշխան ցանքը համայնացվում և և նրա բերքահավաքը կատարվում և կոլեկտիվ ձեւով»:

Անհրաժեշտ և կոլտնտեսականների անհատ ցանքերի համայնացման շուրջը հասարակական աշխատանք ծավալել, վորպեսզի կոլտնտեսային սեկտորում հացամթերումները կազմակերպված ձեւով անցնեն:

Կուտակիցական, խորհրդային, կոլտնտեսային և մթերող կազմակերպութունները պետք և խՍՀՄ Հող-ժողկոմատի և Կոլտնտեսութունների վորոշումների կիրառումը ապահովեն, վորի մեջ սովում և:

«Այն կոլտնտեսութուններում, ուր դեռ աշխան

*) Համ.Կ. (բ.) Կ, Գ, 1931 թ., հունիսյան պլանումի բան-ձեւից:

ցանքերը չեն համայնացված կոլտնտեսականների ընդհանուր ժողովի վորոշմամբ, նրանք պիտի համայնացվեն և հաշվվեն կոլտնտեսութւյան վաւովյոյ յեկամուտի մեջ: Կոլտնտեսութունների աշխան ցանքային բերքահավաքը կատարվում և կոլտնտեսութւյան միջոցով— ընդհանուր ժողովը քննում և վորոշում և ցանքերի համայնացման կարգն ու պայմանագիրը»: Վոչ պակաս կարեւոր նշանակութուն ունեն կոլտնտեսութւյան ներսում «անհատական մնացորդները» կոլտնտեսականների առանձին խմբերի սպառողական տրամադրութւյունների և կոլտնտեսութւյան ներսում հացամթերումների պլանի տապալման շուրջը, կուլակային ագիտացիայի դեմ, պայքարի խնդիրները: Սերտ պետք և չաղկապել այդ աշխատանքները մենատնտեսային սեկտորի մթերման բոլոր աշխատանքների և հացի չարաչափութւյան դեմ պայքարելու հետ: Այստեղ ել անհրաժեշտ և անչղ դեկավարվել Համ. Կ(բ.)ԿԿ (15 հուլիսի 1931 թ.) ցուցմունքով: Չթույլ տալով մենատնտեսային սեկտորի դերի թերագնահատումը հացամթերումների պլանի իրադրծման ասպարեղում, մանավանդ սպառող չրջաններում և կուլակա-ունեւորային տնտեսութւյունների պետութւյան հանձնելիք հացի կայուն առաջադրանքները սահմանելիս, կուլակազմակերպութւյունները կոլտնտեսականներին մոբիլիզացիայի յենթարկելու մարտական աշխատանք պիտի ծավալեն, վորպեսզի հացամթերումների ասպարեղում աշխատավորական բոլոր գյուղացիութւյան կողմից յուրացվի «վաչ մի ցեւունքը հալ մասնավորին» լողունը:

Մթերող կազմակերպութւյունները (Հացանասնահանարտ, Առյուղայինը) խաշորագույն պատասխան

նատվութիւն են կրում յերկրի առջեւ՝ աշխատանքների կազմակերպման և նամանավանդ իրենց ամբողջ տեսնելիական և կազմակերպչական ասպարատի յուր ժամանակին պատրաստման համար, այն հաշիվով, վոր կոլտնտեսութիւններից, ՄՏԿ և խորհանտեսութիւններից հացը հաշոյ կերպով ստացվի և դուրս բերվի: Խորհանտեսութեան և ՄՏԿ գերեկտորները ու կոլտնտեսութեան վարչութիւնը համապատասխան կուսակցական և հասարակական կազմակերպութիւնների հետ միասին, պիտի բոլոր միջոցները գործադրեն, վորպեսզի կատարվի պետութեան առջեւ արած խոստումը՝ իրենց հատկային տնտեսութեան ասպանքային յետադիւր լրիւ և յուր ժամանակին հանձնելու և կայարանամերձ կետերը դուրս բերելու: 1931 թ. հուլիսի 15-ի Համ. Կ(բ)ԿԿ-ի գերեկտիվի համապատասխան՝ հացաձեւութեանների կազմակերպման մասին, — կոլտնտեսութիւններում, նույնպէս և ՄՏԿ շրջաններում անհրաժեշտ է առանձնացնել վարչութեան մեկ հատուկ անդամ, կամ եւ ՄՏԿ-ի գերեկտորի տեղակալներից մեկին, վորը տանելու յե հացի հանձնման ամբողջ պրակտիկ աշխատանքը, ապահովելու նրա շտապ փոխադրումը, տարայի հավաքելը, կալած և հանձնած հացի հաշվուման գործը և այլն: Այս հանգամանքը կոլտնտեսութեան վարչութեան և ՄՏԿ գերեկտորին յուր ժամանակին սլանով նախատեսված հացի լրիւ հանձնման պատասխանատվութիւնից չի ազատում»: Կոլտնտեսային սխտեմը հացամթերումների նախապատրաստական շրջանում պիտի ամեն կերպ ծավալի այդ աշխատակիցների առանձնացման գործը: Հատուկ ուշադրութիւն պիտի դարձնել մեքենատրակտորային կայանների հա-

ցամթերումների վրա: Այստեղ պահանջվում է կազմակերպչական մեծ աշխատանք՝ ամբողջ կոլտնտեսային, կուսակցական և կոմյունիստական բլիջների, կոլեկտիվ և ՄՏԿ-ների աշխատակիցներին ներդրվելու ասպանքային հացը պետութեան հանձնելու գործի մեջ: ՄՏԿ-ների հաստատված հացամթերումների պլանը պիտի մշակվի կոլտնտեսութիւնների ժողովներում, արտադրական խորհրդակցութիւններում, միաժամանակ ջրնեկով կոնկրետ ծրագիր ընդունելու՝ այդ պլանի կատարման սլայմանով: Հացի հանձնման գործի կազմակերպման համար կարեւորագույն դերը խաղալու յեն կալման բրիգադաները և հացի փոխադրման կազմակերպումը:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրութիւն դարձնել կալման բրիգադաների, կառուցահանգիների կոմպլեկտացման վրա, վերջնելով դրանց վոչ թե միայն տվյալ, այլ և ուրիշ կոլտնտեսութիւնների կոլտնտեսական կոմյունիստականների կողմից: Անհրաժեշտ է կազմակերպել պայքարն այնպիսի տարրերի դեմ, վորոնք կուլային ագիտացիայի աղղեցութեան առի, աշխատում են թագցնել ՄՏԿ-ների վոլովոյ արտադրանքը և սակասցնել ասպանքային յետադիւրը, և նրանց դեմ, վորոնք ձգձգում են թե տարայի մոբիլիզացիան և թե հացի դուրս բերելը կայարանամերձ կետերն ու նախահանգիտները: Ասպարատի ղեկավարների և կայսող բրիգադաներին կից կառուցահանգիների հետ միաժամանակ կուսակազմակերպութիւնները և ՄՏԿ ղեկավարները, պետք է որ ավուր տանեն սխտեմատիկ կազմակերպչական աշխատանք և կոնկրետ կերպով ղեկավարեն գործունէութիւնը: Կոլտնտեսութիւնների և մեքենատրակտորային կայանների հացամթերումների ամբողջ

աշխատանքները պիտի սերտորեն շաղկապվեն հնգամյա-
կի յերրորդ վճռական տարվա ծրագրի իրագործման և
կոլտնտեսութեան յոլունների ամրապնդման խնդիրների հետ :
Յուրաքանչյուր կոլտնտեսականին ընդհանրապես և Մ.
Տկ-ների շրջանների կոլտնտեսականներին մասնավորա-
պես, աինհայտ և — հացամթերումների և ժողովրդա-
կան ամբողջ տնտեսութեան վերակառուցման շաղկապը :
կոլտնտեսութեան յոլունների և Մ. Տ. կ-ների կողմից ստաց-
ված տրակտորները, ավտոմոբիլները պարզորեն հաս-
տատում են այդ կապը : Ինչպես հացամթերման բոլոր
աշխատանքների, այնպես էլ կոլտնտեսութեան յոլուններում,
Մ. Տ. կ-ներում հացամթերման կազմ, վերպման աշխա-
տանքները ընթացում, անհրաժեշտ և անյերկբապարտին
հիշել և կիրառել Կ. Կ. -ի գերեկտիվան 15/VI (1931 Գ.)
« Կոլտկուլտը, վարվել պետ ի և անեն յառժողովուտի
որգանները, գյուղկոոպերացիան և տեղական կազմա-
կերպութեաններն ընթացիկ տարվա հացամթերումնե-
րի ժամանակ՝ այդ այն և, վորպեսզի մթերման և տե-
ղափոխման աշխատանքների մեջ անգլաված չլստեղծվի
և հացի մթերումների և տեղափոխման մեջ միասնա-
կանութեան ստեղծվի » :

13. ՀԱՑԱՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐ- ՊՈՒՄՆ ՄԵՆԱՏՆՏԵՍԱՅԻՆ ՍԵԿՏՈՐՈՒՄ

Ինչպես վերելում ասված է, հատուկ նշանակու-
թյուն ունի մեծատնտեսային սեկտորում մթերումների
կազմակերպման գործը : Այս ուղղութեամբ պիտի պահ-
պանել անցյալ կամպանիաներում կիրառվող մթերման
աշխատանքների բոլոր մեթոդները : Մենատնտեսային
սեկտորի մթերումների պլանավորման ժամանակ ան-

հրաժեշտ և յեղնել նախ և առաջ նրանից, վոր մենատն-
տեսատեր միջակ և չքավոր տնտեսութեանները պետք
և հանձնեն (վաճառեն) պետութեան իրենց ապրանքային
ավելցուկը, կոնտրակտացիոն պայմանագրերի հիման
վրա կամ ինքնապարտավորեցման կարգով, հարելան
կոլտնտեսականների կողմից համանվելիքի միայն վոչ
պակասի չափով :

Իսկ ինչ վերաբերում է կուլակա-տնտեսային
տնտեսութեաններին, նրանց վերաբերյալ անհրաժեշտ
է գործադրել մթերումների փորձված ձևով՝ գյուղկոոպ-
երկուների կողմից տալ կայուն առաջադրանքներ :

Անհրաժեշտ է մենատնտեսային սեկտորի մթերում-
ների գործին մասնակից դարձնել կոլտնտեսական աղ-
տիվին :

Միայն կոլտնտեսութեան վրա հենվելով, ինչպես
այս ապացուցեց անցյալ տարվա կամպանիայի փորձը,
մենք հնարավորութեան կունենանք հասարակական—
մասսայական և աշխատանքի մեթոդի և փորձի գործա-
դրման հիմունքով, արագ և կազմակերպված ձևով
անցկացնել հացամթերումները մենատնտեսային սեկ-
տորում : Անհրաժեշտ է խիստ կարգապահ լինել այն
անհատ տնտեսութեանների վերաբերյալ, վորոնք հա-
ցաանասնապահ կենտրոնի, հետո պետութեան վաճառ-
վելիք հացի վերաբերյալ, կոնտրակտացիոն պայմանա-
գիր են կնքել : Գյուղական ախտիվի, ոժանդակող
հանձնաժողովների, կոլտնտեսական հատուկ բրիգադա-
ների ողնութեամբ կոնտրակտացիոն պայմանագրերի
կատարման ընթացքի սխառմատիկ ստուգումը մի կող-
մից և ինքնապարտավորեցման հիմունքով հացամթե-
րումների կազմակերպումն, իրենց ցանքերը կոնտրակ-

տացիայի շնթարկած չքալորումիջակային տնտեսութ-
 թյունների միջև մյուս կողմից, — ահա այն հիմնական
 մեթոդները, վորոնք հետեվողականորեն պիտի իրա-
 դրծվեն մենատնտեսային սեկտորում հացամթերում-
 ների կազմակերպման վերաբերյալ: Հատուկ նշանա-
 կություն ունի հացի չարանաչութայն դեմ պայքարը,
 վորպես մենատնտեսային սեկտորում հացամթերումնե-
 րի ճիշտ կազմակերպման ուղիղ միջոցը: Ջրավորումի-
 ջակային տնտեսությունների միջև մասսայական աշ-
 խատանքի ծավալման հիմունքով, անհրաժեշտ է հաս-
 նել նրան, վորպեսպի բոլոր աշխատավորական գյուղա-
 ցիներն յուրացնեն և կիրառեն՝ «Վոչ մի ցենտներ հաց
 մասնավորին» լողունքը: Մթերող կազմակերպություն-
 ները և գյուղական հասարակայնությունը պետք է
 խիստ հետեվեն, վորպեսպի տեղիք չարվեն այն ան-
 վույթ վերաբերմունքին հանդեպ կուլակա-ունեվորա-
 յին տնտեսությունների և մենատնտեսային սեկտորի
 պլանների կատարման վերաբերյալ, ինչպիսիները նը-
 կատվել են անցյալ կամսյանիայում մի շարք վայրերում
 և վորոնք չըջանների և գյուղերի հացամթերման պլան-
 ների թերակատարման պատճառը դարձան:

14. ԱՎԵԼԻ ՇԱՏ ԿՈՆԿՐԵՏ ՂԵԿԱՎԱՐՈՒ-
 ԹՅՈՒՆ ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻՆ

Հացամթերման կամպանիան պահանջում է, ինչ-
 պես մեր սոցիալիստական շինարարութայն մյուս բնա-
 զավաններում, վոչ պակաս չափով ուժեղացնել կոն-
 կրետ ղեկավարությունը յուրաքանչյուր հարցի շուրջը:
 Կուսակցական և մթերող կազմակերպությունները չը-
 պիտի բավականան ընդհանուր հրահանգներով: Ինչպես

նախապատրաստական, այնպես ել հացամթերման պը-
 լանների իրադրծման պրոցեսում, — անհրաժեշտ է
 հսկողություն ունենալ յուրաքանչյուր խորհանտեսու-
 թյան, Մ.Տ.Կ.—ի և կոլտնտեսութայն աշխատանքների
 ընթացքի վրա, ինչպես և գյուղում յուրաքանչյուր
 կոնարակատանի, կուլակա-ունեվորային տնտեսու-
 թյան, յուրաքանչյուր մթերման կետի վրա: Նման
 հսկողություն պահանջվում է նաև յուրաքանչյուր ցենտ-
 ներ հացի կայարանամերձ և նավահանգստային կե-
 տերի տեղափոխման, ինչպես և տարայի մորիլիդացիա-
 յի, հաց հանձնողների հետ հաշվարկը վերջացնելու,
 կոլտնտեսությունների և չքալորումիջակային տնտե-
 սությունների մեջ մասսայական աշխատանքների ճիշտ
 կազմակերպման վրա:

Հացամթերումների վերաբերյալ կոնկրետ ղեկա-
 վարությունը պիտի իրագործվի վոչ թե թղթի շըջու-
 բերականներով, այլ խորհանտեսությունների, կոլտըն-
 տեսությունների, գյուղերի և մթերման կետերի հետ
 կենդանի կապ հաստատելով: Հացամթերման կամպա-
 նիայի կոնկրետ ղեկավարությունն անմիջականորեն
 կապված է նույնպես մթերման գործի բոլոր պրակտի-
 կայի և տեխնիկայի հետ: Կուսակցութայն յուրաքան-
 չյուր բըիջ, հացամթերումներն ուժեղացնելու համար
 ուղարկված յուրաքանչյուր աշխատակից, նամանա-
 վանդ մթերման կազմակերպությունների ղեկավարնե-
 բը, պիտի զգուշ ուսումնասիրեն և յուրացնեն հացա-
 մթերումների անցկացման կանոնները, կարգը, պայ-
 մանները և կազմակերպման տեխնիկան:

15. ՀԱՑԱՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԿԱԶՄՆԱԿԵՐՈՒՄԸ ՈՒԺԵՂ ՏՅԵՆՆԻ-
ԿԱԿԱՆ ԲԱԶԱ

Այժմյան հացամթերման կամպանիայի մարտական և յուրջ խնդիրներից մեկը հանդիսանում է ուժեղ տեխնիկական բազա ստեղծելը, վորը կհաղթահարեր հացի պլանների կողմից առաջադրվող աճած պահանջները և միաժամանակ կապահովեր պետական սահմանված ժամկետով մթերումների ավարտումը և ամբողջ մթերված հացի կայարանամերձ ու նախահանդիսների մոտի պետական հացամթերման կետերի տեղափոխման գործը: Դեռ վե՛ր մի անգամ հացամթերումների աշխատանքներն այդքան պահանջկոտ չէին յեղել տեխնիկական բազայի նկատմամբ, ինչպես այս տարի հանդեպ խորհանտեսությունների, կոլտնտեսությունների և Մ.Տ.Կ.ների վերաբերյալ:

Հացամթերումների տեխնիկական բազայի խնդիրը հացի կամպանիայի ամենալուրջ խնդիրներից մեկն է: Յե՛ղ իրոք, յերբ խորհանտեսությունները տալիս էին մեզ մեկ կամ մի քանի միլիոն ցենտներ հաց, կամ ել յերբ կոլտնտեսության հացը կազմում էր 20-30% միասին, իսկ Մ.Տ.Կ. (դեռ անցյալ տարի) — յերկրում մըթերված հացի միասին 5%, այն ժամանակ նրանք իրոք մեզ այնպիսի խոշոր պահանջներ չէին առաջադրում, հացամթերումների տեխնիկական բազայի վերաբերյալ, ինչպիսին նրանք առաջադրում են այս կամպանիային, յուր հսկա թափով աճման հետեվանքով: Այժմ խորհանտեսությունների, կոլտնտեսությունների և Մ.Տ.Կ.ների հատիկային տնտեսությունը պահանջում է մեզ

նից պահանջների ցանցի խոշոր լայնացում (երեվատորներ, ջրաղացներ, կայարանամերձ մթերման կետեր), նա պահանջում է նույնպես հացի ընդունման կետերի այլ կազմակերպչական աշխատանք:

Մթերված հացի արագ և նպատակահարմար տեղափոխման շահերը պահանջում են հացի կենտրոնացումը ելիվատորների, կայարանամերձ և նավահանգիստների մոտակա կետերում:

Հացի պաշարի փոշիացումը տանյակ հազարավոր հեռավոր պահանջներում, ինչպես այդ ցույց տվեց անցյալ տարիների փորձը, խոշոր վնասներ է առաջացնում և զժվարացնում է կուտակյուլթյան քաղաքակալության ունեցած հաշտությունների լիովին զգտագործման գործը: Այս ուղղությամբ անհրաժեշտ է անչեղորեն ղեկավարվել հետեվյալ ղրրեկտիվով.

«Կ. Կ. առաջարկում է, հացամթերման ապարատի աշխտանքների ուժեղացման հետ գուզրնքացարար անմիջապես գրազվել տրանսպորտի միջոցների նախապատրաստման և կազմակերպման գործով, հացի շտապ և արագ տեղափոխման համար (ինչպես Գուժտրանապարտի, այնպես ել ավտոտրանսպորտի մախիմալ չափով ոգտագործումն) ու այսպես կոչված խորքերի կետերում վոչ մի պահեստ չունեմալ, բացառությամբ աւանձին հատուկ հեռավոր շրջանների, վարոնց ցուցակը հաստատելու յն Մատոճղկումաուր»: Խորքի պահեստի ցանցի և հացի տեղափոխման վերաբերյալ անցյալ կամպանիաների ընթացքում մե՛նք ունեյինք մի շարք թերություններ: Յեթե անցյալ կամպանիայի սկզբում (1930 թ. հուլիս) ունեյինք 7½ հազար խորքերի հացամթերման պահեստներ, սակայն վերջում այդ ցանցն

անոց մինչև 10¹/₂ հարյուր միավորը՝ 3050 տոնն տարր-
առվածք, վորի հետևանքով խորքերի կետերում մեծ
քանակությամբ հաց մնաց։ Խորքի կետերը բացվում
եյին հաճախ ելեվատորների, ջրաղացների և կայարա-
նամերձ կետերից 5-10 կիլ. հեռավորությամբ վրա։
Ուկրաինայում 20 կիլ. ռադիոս ունեցող տարածու-
թյան վրա գտնվում եյին յերկրի բոլոր պահեստները
67% . Կ.Ս.Մ. (Ա.Վ.)—52% , ներքին—վոլգայում 42%
և այլն։ Հացամթերումների կազմակերպման գործում
այսպիսի պրակտիկա վոչ մի դեպքում չի կարելի ըն-
դունել ճիշտ և սոցիալիստական շինարարության շահե-
րին համապատասխան։ Այս պրակտիկան պետք է վըճ-
ուականորեն լիկվիդացիայի յենթարկել։ Մեկ ուրիշ յե-
րեվոլյութ ևս անցյալ տարվա հացամթերումների ժամա-
նակ մեծ կորուստներ պատճառեց—այդ պահպանման
անդորրագրերի սխտեմն եր (сохровные расписки).
Մենատնտեսությունների և կոլլեկտիվ տնտեսություն-
ների հացի մթերումը պահպանման անդորրագրերով
թողնելը հասցրեցին այն բանին, վոր ել ավելի շատա-
ցավ հացի պետական ֆոնդերի վոչիացումը և մթեր-
ված հացն ավելի փչացավ։ Վոչ մի բուպե չտատանվե-
լով, անհրաժեշտ է ամենավնական պայքար տանել,
ինչպես նրանց հանդեպ, ովքեր հացամթերումները տա-
նում են պահպանման անդորրագրերով քողնելու մը-
թերման ձեվով, այնպես ել նրանց դեմ, ովքեր այս կամ
այն նամապարհով ոժամուկում են հացի պետական
ֆոնդերի վոչիացման՝ այսպես կոչված յսարքերի կե-
տերում քողնելու հետեվանքով։ Ընթացիկ տարում չը-
պիտի լինեն վոչ պահպանման անդորրագրեր, վոչ ել
հացի այն վոչիացումը, վորպիսին տեղի ունեցավ ան-

ցյալ կամ պանիայի ընթացքում առանձին շրջաններում։
Տեխնիկական բազայի հարցի հետ սերտորեն կապված է
մթերված ամբողջ հացի պետական կայարանամերձ հա-
ցի պահեստների տեղավորություն կազմակերպման
հարցը։ Անհրաժեշտ է վճուականորեն պայքարել անցյալ
տարիների կամ պանիաների ընթացքում տեղի ունեցած
փորձերի դեմ, վորով հացամթերման և տեղավորման
գործը միանգամից դատվում եյին, վորպես յերկու ինք-
նուրույն գործողություններ։

Հացի մթերումները և պետական պահեստները տե-
ղավորելը՝ (յերկարուղային կայաններ և նավահան-
գիստներ) հանդիսանում են միմյանցից անբաժանելի
խնդիրներ։ Չի կարելի միայն մթերված հաշվել այն
հացը, վորը մթերված է, բայց չի տեղավորված և չի
հանձնված հացի կայարանամերձ կետերին։ Պլանների
նման ձեվի կատարումն հացամթերումների պլանի փաս-
տացի և իրական կատարումն չէ։ Ահա ինչու համար
ել ելեվատորների կառուցման խնդիրը, կայարանամերձ
և նավահանգիստների մոտի պահեստների մոբիլիզա-
ցիան և վերանորոգումը, տրանսպորտի կազմակեր-
պումը (դուժ և ավտոմոբիլային), տարային մոբիլիզա-
ցիան—հանդիսանում են հացամթերումների պլանի յուր
ժամանակին կատարման և ամբողջ մթերված հացի տե-
ղավորման կարեվորագույն պայմանները։

Հատիկային տնտեսության վերակառուցումը պա-
հանջում է հացամթերումների տեխնիկական բազայի
համապատասխան վերակառուցում։ Գյուղատնտեսու-
թյան սոցիալիստական սեկտորի աճմանը զուգընթացա-
բար հացի գործի տեխնիկայի խնդիրն ավելի ու ավելի
վճուական է դառնում։

Այժմ արդեն բոլորովին անպետք է այսպես կոչ-
ված խորքերի կետերում հացի ընդունման և պահպան-
ման սխտեմը, չորը դոյություն և ունեցել անցյալ
շրջանում, յերբ ունեցինք 25 միլ. փոշիացած, անհատա-
կան դյուղացիական տնտեսություն: Հացամթերումնե-
րի տեխնիկական բազան մենք պիտի վերակառուցենք
համապատասխան այն պահանջներին, վորպիսիք մեզ
ստալադերելու յեն արդեն վոչ թե 25 միլ. դյուղական
տնտեսություններ, այլ մի քանի հարյուր հազար խո-
շոր կոլլեկտիվ տնտեսություններ, հատկապէս սոցիա-
լիստական Փարբիկաներ—խորհրտնտեսությունների և
արագ տեմպերով աճող մեքենատրտրոյային կայան-
ներ: Այսպիսով հացամթերումների տեխնիկական բա-
զայի վերակառուցման հարցը հանդիսանում է սոցիա-
լիստական շինարարության կարեւորագույն տնտեսա-
կան պրոբլեմը: Սոցիալիստական շինարարության ինչ-
պէս այս բնադաւառում, նույնպէս և մյուսներում, մեր
ստալ խնդիր և դրվում տասնյակ հազարավոր կետե-
րում ցվրված կուստար ձեւի պահեստները վճռակա-
նորեն փոխարինել խոշոր և յերկաթուղային կայանների
և ջրային ճանապարհների մոտ գտնված մեքենայացված
ամբարներով, երեւատորներով և ջրաղացներով:

Պահեստային տնտեսության մեքենայացումը և նրա
վճռական կենտրոնացումը յերկաթուղային և ջրային
ճանապարհներէ մոտ, հանդիսանում է հացի դյուղատըն-
տեսության սոցիալիստական սեկտորի արտադրության
հսկայական քանակության արագ մօրիլիզացիայի և
ձեռն տեղափոխման կարեւորագույն միջոցը: Հացա-
մթերումների տեխնիկական բազայի վերակառուցումը

միաժամանակ լուծում է պետական հացամթերումների
եժանացումը, վերադիր և վոչ արտադրական ծախքերի
կրճատումը, կորուստների և այլի դեմ պայքարի հարցը:

Մթերող ապարատը, նույնպէս և առանձին կազմա-
կերպություններ, հավանական է իսկույն չըմբռնեն
ներ ժողովրդական տնտեսության համար այն դժի հե-
տախտական նշանակությունը, վորով խորքի կետերի
պահեստները վերացվում են և հետեւողականորեն նրանք
վիճարկնվելու յեն կայարանամերձ և նավահանգիստ-
ների մոտակա հացի ընդունման կետերով, վորի մասին
պար ասված է Կ.Կ.—ի վորսշումների մեջ 1931—32 թ.
հացամթերումների կամպանիայի կազմակերպման վե-
րաբերալ: Կուսակցական, մթերող և խորհրդային կազ-
մակերպությունների դերը նրանումն է, վորպեսզի լայն
պարզաբանել կոլտնտեսական մասսաներին ամբողջ հա-
ցի կայարանամերձ և նավահանգստի մոտակա կետերի
անմիջակերտն կենտրոնացման ժողովրդական տնտե-
սության համար խոշոր նշանակությունը, միաժամանակ
վճռականապէս պայքարել նրանց դեմ, ովքեր պահան-
ջում են հացամթերումների արդեն հնացած և հին տեխ-
նիկական բազայի ձեւերը:

Հացամթերումների տեխնիկական բազայի կարգա-
վորումն սկսվում է խորհրտնտեսություններում ՄՏԿ-նե-
րում և կոլտնտեսություններում: Այս ուղղությամբ կու-
սակցական, խորհրդային, մթերող և կոլտնտեսական
կազմակերպությունները պիտի ապահովեն՝

Առաջինը—կադրերի ընտրությունը. որանք պիտի
ապահովեն տեխնիկական բազան, սկսած կալսող բրե-
զագներէ և վերջացած երեւատորների վրա հացի
գործով, ինչպէս և ջրաղացների, յերկաթուղային,
աղտո և դուժ-արանսպորտի աշխատողներից:

Յերկրորդը—Այս աշխատակիցների աշխատանքների կազմակերպումը գործարքային և յուր ժամանակին ու կրենց պարտականությունների լիովին կատարման խոչորադույն շահագրգռման սկզբունքներով:

Յերկրորդը—Հացամթերումների տեխնիկական բազայի լայնացումը, այսինքն—տարայի արտադրությունը, վերանորոգումը, մոբիլիզացիան և նրա շրջանառությունը, առանց տարայի հացի վոխադրման կազմակերպումը. պահեստների նոր կառուցումը, վերանորոգումն ու նրանց մոբիլիզացիան. ՄՏԿ-ների, կոլտնտեսությունների և գյուղացիական մեծատնտեսային ավտոտրանսպորտի և քարտոզ ու թի լրիվ ոգտադործման կազմակերպումն՝ յուր ժամանակին հացը կայարանամերձ կետերը տեղափոխելու համար: Ելեվատորների և պահեստների շինարարության բնագավառում մենք արդեն ունենք խոչորադույն հաջողություններ: Վերջին յերեք տարվա ընթացքում ելեվատորների տարողությունն աճել / յերկու անգամից ավելի: 1928-29 թ. Սոյուզխլեբը ուներ 1013870 տ. ընդհանուր տարողության ելեվատորներ, 1929-30 թ.—1124860 տոնն, 1930-31 թ.—1 0713) տոնն, և վերջապես 1931-32 թ. Սոյուզխլեբի ելեվատորների տարողությունը պիտի լինի 2 միլ. տոնն: Կվելի արագ աճեց կայարանամերձ և նավահանգիստների մոտի պահեստների ցանցը. Սոյուզխլեբի հացի պահեստների ընդհանուր տարողությունն այս տարի հասնում է 13 միլ. տոնն:

Վոչ միայն մթերող կազմակերպությունները, վորոնց պարտականությունն է կազմակերպելու տեխնիկական աշխատանքն, այլ և կուսակցական, խորհրդային, պրոֆեսիոնալ, կոլտնտեսային ու կոմյունիստիկության կազմակերպությունները պետք է պարբերաբար զբաղվեն հացամթերումների տեխնիկական բազայի ամրացման խնդրով, չմոռանալով, վոր նույն իսկ լավ կնքման

կերպված (կազմակերպչական և մասսայական աշխատանքների տեսակետից) հացամթերման կամպ-նիւն կարող է տապալվել, նրա տեխնիկական բազայի անլուրմակերպության հետեվախնով: Նման պրակտիկ խնդիրներն, ինչպիսին են՝ մթերման կետերի հերթերի վերացումը, ամբողջ որվա ընթացքում հացի անդադար ընդունումը, կշիռների արագ աշխատեցնելու մարտիմալ հնարավորության ոգտադործումը, կամ ել հաշվապահական—հաշվային ապարատի աշխատանքների այն ձևվի կազմակերպումը, վորով հացը հանձնողների հետ հաշվարկը կատարվի շտապ և առանց ձգձգումների և այլն,—այս պրակտիկ խնդիրներն այժմ հատկապես տնտեսության աճման պայմաններում, ավելի և մեծ նշանակություն են ձեռք բերում:

Յերե բերհախալաքի հարցի նիշտ լուծումը հանդիսանում է հացամթերումների պլանի իրագործման կարեվորագույն նախադրյալը, ապա հացամթերումների տեխնիկական բազայի հարցի լուծումը հանդիսանում է հացի մթերման և ընդունման, նրա պահպանման, փոխադրման ու ոգտագործման գործի վնասկան պայմանը:

16. ԱՎԵԼԻ ՈՒՇԱԴԻՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԻ ՀԱՅԻ ՄՈՒՏԳԻ ՅԵՎ ՅԵԼԻԻ ՀԱՇ- ՎԱՌՄԱՆ ՎՐԱ

Հացամթերումների կազմակերպման տեսակետից ավելի անհրաժեշտ և կարեվոր խնդիր է հանդիսանում հացի մուտքի և յեյքի գործառնական հաշվառման կանոնավորումն: Վերջին տարիների ընթացքում այդ ուղղությամբ մենք ունենք վորոչ հաջողություններ: Սակայն, ինչպես այդ ցույց տվեց անցյալ կամպանիայի պրակտիկան, գործառնական հաշվառումը հետ և մնում հացի

գործառնությունից, վորպիսի հանդամանքն ապրում է հացի ամբողջ գործողությունների վրա: Սովորաբար հացամթերումների կազմակերպիչները (մթերող որգանները), առանձին կուս. և խորհրդային կազմակերպությունները հարկ յեղած ուշադրությունը չեն դարձնում գործառնական հաշվառման գործի կանոնավորման վրա, ինչպիսին պահանջում է հացի աշխատանքների այդ բնագավառը: Հացի մուտքի և յեկքի հաշվառման գործի ճիշտ կազմակերպումը, հացամթերումների ընթացքի գործառնական տեղեկագրերի աշխատանքների ճիշտ և ժամանակին դրույթը հանդիսանում են վոչ թե միայն ստորադաս «հաշվապահության» հարցեր, — այլ և հացի հաշվառման ճիշտ կազմակերպումն խոշոր տնտեսական — քաղաքական նշանակութուն ունի: Բոլորին հայտնի յե, թե ինչ կազմակերպիչ ուժ ունեն մեր հնչորյա գործառնական տեղեկագրերը: Յեթե այդ գործառնական տեղեկագրերը չեն համապատասխանում իրականության, յեթե նրանք հացամթերումները ընթացքն աղավաղում են (հաշվառման և հաշվետվության գործի սխալ կազմակերպության հետևանքով), — նրանք ճիշտ չեն տեղեկացնում կուսկազմակերպություններին, կոլտնտեսային և չքավորամիջակային մասսաներին ու ընդհակառակը՝ հացի հաշվառման ու հաշվետվության գործի ճիշտ կազմակերպումն հնարավորություն է տալիս լավ դեկավարել հացամթերումները և ճշտորեն կազմել պետական հացի ֆոնդերի ոգտագործման պլանները: Վերջապես, հացի մուտքի և յեկքի հաշվառման հարցը է միաժամանակ մթերված հացի պահպանումն և նրա կորուստների կրճատման հարցը: Չի կարելի վոչ մի բոպթությալարել հացամթերումների գործառնական հաշվետվության սահմանված ձևերը փոփոխել ինքնազուլուխ. չի կարելի նույնպես հանդուրժել այն բոլոր ոպորտունիս

տական փորձերին, վորով աշխատում են ոգտագործել գործառնական հաշվետվությունը սեփական աշխատանքների թուլությունը ծածկելու համար: Անցյալ կամպանիայի ընթացքում տեղի ունեցած գործառնական հաշվետվությունների ձեւերի ու կարգի խախտման և նրանց տեղեկագրերի ինքնազուլուխ փոփոխման և այն առանձին փաստերը պետք է բացարձակորեն արմատախիլ արվեն այժմյան հացամթերումների պլավատիկայի ընթացքում: Հացի մուտքի և յեկքի հաշվառման խորշված կարգի յուրաքանչյուր խախտողը պետք է վորակվի վորպես պետական հացամթերումների գործը տապալող և հացի զեղծարար:

Կուսակցական և մթերող կազմակերպությունների կողմից հացամթերումների կամպանիայի կոնկրետ դեկավառման ձևերից մեկը մթերման կետերի, ՄՏՆ-ների, խորհանտեսությունների, առանձին կոլտնտեսությունների պարբերական ստուգումն է (հատուկ բրիգադների միջոցով)՝ նրանց մեջ հացի գործառնական հաշվառման և հաշվետվության գործն ուղիղ դնելու նկատառումով: Դեպի աշխատակիցները և գործառնական հաշվառման գործը անհրաժեշտ է սահմանել այնպիսի վերաբերմունք, վորպիսին պահանջում է հացամթերման կամպանիայի այդ ամենապատասխանատու բնագավառը:

17. ՀԱՏԱՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊ ՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆԻՆԵՐԸ

Այժմյան հացամթերման կամպանիայի կազմակերպումը պիտի իրագործվի լայնորեն ծավալված կազմակերպչական-մասսայական աշխատանքների հիմունքով: Հացամթերման այժմյան կամպանիայի ընթացքում կազմակերպչական աշխատանքների դերը նրանումն է, վոր-

պեղի ամենից առաջ, բանվորական, կոլտնտեսային և
չքավորամիջակային մասսաներին մտքի լիզացիայի յեն-
թարկել՝ հացամթերումների պլանի անցկացնել: Հացա-
մթերումները հակդիսանում են կարեվորագույն տնտե-
սական-վաղաֆական կամպալիա, սոցիալիստական շի-
նարարութեան կարեվորագույն բնագավառը: Կուսակ-
ցական կադմակերպութունները պետք է ստեղծեն մթեր-
ման լայն ակտիվ խորհրդատեսութուններում, կոլտնտե-
սութուններում, մ. Տ. կ-ներում և բոլոր գյուղերում՝ Հա-
տուկ ուշադրութուն պիտի դարձվի գյուղի հասարա-
կայնութեան մարտական որդանի՝ հացամթերումներին
ոճանդակող հանձնաժողովների կազմակերպման և ընտ-
րութեան վրա: Գյուղ հանձնաժողովների կազմի մեջ
այս տարի պիտի ընտրվեն հարյուր հազարավոր կոլ-
տնտեսականներ: Ահա թե ինչու անհրաժեշտ է ոժանդա-
կող հանձնաժողովների վրա ուշադրութեան կենտրոնը
բեվեռել, մասնակից դարձնելով այդ կա՛պանիային կոլ-
տնտեսային, խորհրդատեսութունների բանվորների ա-
ռաջավոր ակտիվին, ինչպես և չքավորամիջակային
տնտեսութուններից, ովքեր անցյալ տարվա հացա-
մթերման կամպանիայի ժամանակ վերձով ապացուցե-
լ են հացի մթերման պլանի համար պայքարելու իրենց
պատրաստակամութունը: Տեղական կուսակցական կազ-
մակերպութունների, Մատոճկոմատի և Հայանասնա-
պահկենտրոնի բոլոր սիստեմի կարեվորագույն կազմա-
կերպչական խնդիրներից մեկը հանդիսանում է Հացա-
նասնապահիկետրոնի տեղական որգանների գյուղլիա-
գրների ցանցի կազմակերպումը, վորումք հացի պլանի
կատարման և մթերված հացի կայարանամերձ կետերի
տեղափոխման համար պրակտիկ աշխատանք պիտի առ-

«Հացամթերումների հաշոյ կատարման համար,—
ասված է Համկ(բ)ի ԿԿ-ի վորոշումների մեջ՝ վերահաս
հացամթերումների կամպանիայի մասին,—վար նշանա-
կում է և հացի տեղափոխութեանը,—հատիկայլն շքի-
ջանների յուրաքանչյուր գյուղխորհրդին կից պետք է
առանձնացվեն Հացանասնապահիկետրոնի մթերումնե-
րի լիագրներ:

